

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ԻԶԵՎԱՆԻ ՄԱՍՆԱԸՅՈՒՂ

ԱՌԱՋԻՆ ԿՈՒՐՍԻ
ՈՒՍԱՆՈՂԻ ՈՒՂԵՑՈՒՅՑ

ԻԶԵՎԱՆ 2016

Մեթոդական սույն ուղեցույցի նպատակն է առաջին կուրսեցիներին ծանոթացնել Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի պատմությանը, կառուցվածքին, ուսումնառության կանոններին, ուսանողների իրավունքներին և պարտականություններին, գիտամանկավարժական գործընթացի կազմակերպմանը և ներհամալսարանական կառույցներին և նրանց գործունեությանը:

Ուղեցույցում ներկայացված են նաև դասապրոցեսների (դասախոսություններ, գործնական և սեմինար պարապմունքներ և այլն) մեթոդական կողմերը, քննություններին և ստուգարքներին պատրաստվելու յուրահատկությունները, ինքնուրույն աշխատանքի կազմակերպման առանձնահատկությունները:

Հիմնականում ուղղված լինելով ԵՊՀ-ի Իջևանի մասնաճյուղի բակալավրիատի առաջին կուրսի ուսանողներին՝ մեթոդական սույն ուղեցույցը նախատեսված է նաև բոլոր համալսարանականների համար:

ԵՊՀ ԻԶԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ՏՆՕՐԵՆԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔ



Միրելի՛ ուսանող,

Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղը ընդամենը քսան տարեկան է՝ քսանհինգամյա անկախ Հայաստանի որդեգիրը, սահմանամերձ Տավուշ աշխարհի առաջին բարձրագույն հաստատությունը: Իր հիմնադրման առաջին օրից նա մեծ դեր է խաղացել մարզի կրթամշակութային կյանքում, նվաճել իր հաստատուն տեղը հանրապետության բուհերի շարքում:

Կրթօջախի լինելիության շնորհիվ երիտասարդ տավուշցին իր տանն է՝ կապված իր հող ու ջրին, իր ազգային ու մշակութային ակունքներին, ու նա է տարածաշրջանի առաջին սահմանապահ ազգապաշտպանն ու ազգապահպանը, այսօրվա ու վաղվա ուսուցիչն ու բնապահպանը, տնտեսագետն ու արվեստագետը:

Լինելով Մայր բուհի լավագույն ավանդների շարունակողը, հետամուտ համաեվրոպական բուհական բարեփոխումներին ու գիտական առաջընթացին՝ կրթօջախը իրականացնում է

ռազմավարական իր ծրագիրը, որի արդյունավետության վկայությունը մեր նվաճումներն են, հաստատության հեղինակության շարունակական բարձրացումը, աշխատաշուկայում մեր շրջանավարտների մրցունակությունը:

Վստահ ենք, որ նաև ԵՊՀ Իջևանի մասնաճյուղն է նպաստելու, որ հաղթահարվեն երկրի սոցիալ-տնտեսական ժամանակավոր դժվարությունները, լուծվեն քաղաքի, մարզի ու հանրապետության բազում խնդիրներ՝ հանուն ազատ, հզոր ու ժողովրդավարական պետության կառուցման ու կայուն զարգացման:

**ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի տնօրեն, պատմական
գիտությունների թեկնածու, դոցենտ Սամվել Առաքելյան**

ԵՊՀ ԻԶԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղն ազգային և տարածաշրջանային դերակատարությամբ կրթական և գիտամշակութային հաստատություն է, որի հիմնական առաքելությունը գիտելիքի ստեղծումը, փոխանցումը և տարածումն է կրթության զարգացման պետական ռազմավարության շրջանակներում:

Մասնաճյուղն ազգային աշխատաշուկայի պահանջներին համապատասխան գիտելիքներով ու անհրաժեշտ կարողություններով օժտված մասնագետներ է պատրաստում բակալավրի և մագիստրոսի որակավորումներով՝ մասնագիտական կրթական ծրագրերով իրականացվող բարձրորակ կրթության, շահակիցների պահանջմունքների բավարարման, ուսանողակենտրոն միջավայրի ապահովման շնորհիվ:

Մասնաճյուղն իր գիտական հետազոտություններով, նորարարական ուսուցմամբ, ժողովրդական հին ու նոր արհեստները արվեստին մոտեցնելու և կիրառելի դարձնելու հետևողականությամբ նպաստում է հայագիտության, հումանիտար, սոցիալ-տնտեսագիտական և բնական գիտությունների ու մշակույթի զարգացմանն ու նորովի մատուցմանը տարածաշրջանում:

ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ

Հայաստանի Հանրապետության հյուսիսարևելյան տարածաշրջանում կրթական և մշակութային խնդիրների լուծման գործում մեծ տեղ ու դեր ունի Երևանի պետական համալսարանի միակ՝ Իջևանի մասնաճյուղը: ԵՊՀ-ի ուսումնական ծրագրե-

րով, հիմնականում Մայր բուհից գործուղված պրոֆեսորադասախոսական անձնակազմի ուժերով և Բոլոնիայի գործընթացով ուսումնառություն իրականացնող մասնաճյուղը պատասխանատվության բարձր զգացումով և պատշաճ մակարդակով է իրականացնում իր կրթական-դաստիարակչական առաքելությունը, մարզի բնակչության համար այնքան երազած, կարևոր ու այնքան անհրաժեշտ կրթօջախի հիմնախնդիրները:

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղը հիմնադրվել է 1994թ.՝ Իջևանի տարածաշրջանային քոլեջի բազայի վրա: Կրթօջախում կատարվում են կառուցվածքային նոր փոփոխություններ, հաստատությունն ավարտում են եռամյա կրթությամբ առաջին շրջանավարտները:

1995թ. ամռանը մասնաճյուղը տալիս է բակալավրական կրթությամբ իր առաջին շրջանավարտները՝ թվով 59 մասնագետ:

1991-1996թթ. մասնաճյուղի տնօրեն է հաստատվում ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Համկես Սուրենի Կարայանը**: 1996թ. ապրիլից մինչև 2000թ. հոկտեմբեր ամիսը ԵՊՀ Իջևանի մասնաճյուղը ղեկավարում է տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր **Շավարշ Մարգարյանը**:

2000թ. մինչև օրս ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի տնօրենն է պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ **Սասկել Արշավիրի Առաքելյանը**:

Վերջին տարիները ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի համար նշանավորվել են որպես կրթական բարեփոխումների շրջան: Շարունակվում են հետևողական աշխատանքները ուսումնագիտական գործընթացի կայունացման և զարգացման ուղղությամբ: Կատարելագործվում են ուսումնական ծրագրերն ու

պլանները՝ որպես ուսուցման նորացման կարևոր պայման և երաշխիք:

Մասնաճյուղի գործունեության հիմնական խնդիրը համալսարանական կրթության բովանդակության և ուսման բարձր որակի ապահովումն է:

Տնտեսական հարաբերություններին համապատասխան վերանայվել է մասնագիտությունների ցանկը: Բնական և հումանիտար գիտությունների, կիրառական արվեստի ֆակուլտետների շրջանավարտները, ստանալով մանկավարժի որակավորում, ապահովում են մարզի հանրակրթության մասնագետ-ուսուցիչների պահանջները:

Կիրառական արվեստի լավագույն շրջանավարտները հաջողությամբ իրականացնում են նաև ազգային-մշակութային ավանդույթների, արժեքների պահպանման, զարգացման և հետագա սերունդներին փոխանցման մեծ առաքելությունը:

Այժմ մասնաճյուղի առկա և հեռակա ուսուցմամբ ուսանում են ավելի քան 1700 ուսանողներ, որոնցից ավելի քան 155-ը՝ անվճար համակարգում:

Հիմք ընդունելով ԵՊՀ-ում գործող կանոնակարգերը՝ մասնաճյուղում մշակվել և գիտական խորհրդի կողմից հաստատվել են նորացված ուսումնական կանոնակարգերը, ներքին կարգապահական կանոնները:

Մասնաճյուղը պատրաստում է ԵՊՀ ծրագրերին համապատասխան բակալավրական կրթության մասնագետներ: Մասնաճյուղում աշխատող առաջատար պրոֆեսորադասախոսական անձնակազմի գերակշիռ մասը ԵՊՀ-ից է: Գիտահետազոտական աշխատանքները հիմնականում ընթանում են կիսահաղորդչային միկրոէլեկտրոնիկայի, փոքր բիզնեսի զարգացման, լեզվի ու գրականության, ինչպես նաև պատմության, ման-

կավարժության և հոգեբանության հարցերի ուսումնասիրության ուղղությամբ: Մասնաճյուղը համագործակցում է բազմաթիվ բուհերի հետ:

ՄԱՍ I

ԵՊՀ ԻԶԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

ԵՊՀ ԻԶԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ՖԱԿՈՒԼՏԵՏՆԵՐՆ ՈՒ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղն ունի 4 ֆակուլտետ:

Հումանիտար գիտությունների ֆակուլտետ

Հումանիտար գիտությունների ֆակուլտետը գործում է ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի բացման օրվանից:

Տարբեր տարիներին ֆակուլտետի դեկաններ են եղել Արտաշես Պապոյանը (բ.գ.դ., պրոֆեսոր), Ռուբեն Աղուզումցյանը (հ.գ.թ., դոցենտ), Սամվել Առաքելյանը (պ.գ.թ., դոցենտ), Ռաֆիկ Նահապետյանը (պ.գ.դ., դոցենտ), Վարդան Ալեքսանյանը (պ.գ.թ., դոցենտ):

Հումանիտար գիտությունների ֆակուլտետում այժմ գործում են 4 ամբիոններ՝

- Հայոց պատմության և հասարակագիտության,
- Մանկավարժության և հոգեբանության,
- Հայոց լեզվի և գրականության,
- Օտար լեզուների:

Ֆակուլտետում ուսուցումը կազմակերպվում է «Պատմություն», «Հայոց լեզու և գրականություն», «Հոգեբանություն», «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա», «Ֆրանսերեն լեզու և գրականություն», «Անգլերեն լեզու և գրականություն» մասնագիտությունների գծով:

Ֆակուլտետում գործում են Երիտասարդ պատմաբանների, Երիտասարդ բանասերների, Երիտասարդ հոգեբանների ուսանողական մասնագիտական ակումբներ:

Ֆակուլտետի ղեկանն է պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր
Աշոտ Արտաշեսի Ներսիսյանը:

Հեռ.՝ /0263/4-00-51, 094-56-25-19 էլ. փոստ՝ **ashot-nersisyan@mail.ru**

Բնական գիտությունների ֆակուլտետ

Բնական գիտությունների ֆակուլտետը 1991թ. Իջևանում բացված տարածաշրջանային քոլեջի երեք ֆակուլտետներից մեկն է, որի առաջին ղեկանը եղել է ֆիզմաթ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր Վալերի Տեր-Անտոնյանը:

1994թ. Բնական գիտությունների ֆակուլտետում ընդունելությունը կատարվում է «Մաթեմատիկա» և «Ֆիզիկա» մասնագիտությունների գծով: Հաշվի առնելով անտառաշատ մարզի բնական առանձնահատկությունները՝ 2000թ. ֆակուլտետի կազմում ավելանում է «Անտառային և անտառապուրակային տնտեսություն» մասնագիտությունը, որի նպատակն էր մարզի անտառտնտեսությունները համալրել բարձրակարգ մասնագետներով: Նույն թվականին «Մաթեմատիկա» և «Ֆիզիկա» մասնագիտությունների փոխարեն ընդունելություն է կատարվում «Կիրառական մաթեմատիկա և ֆիզիկա» մասնագիտությամբ՝ հնգամյա կրթությամբ:

Հաշվի առնելով ԿԳՆ պահանջները՝ 2007թ. կատարվում է մասնագիտությունների փոփոխություն. «Մաթեմատիկա, ինֆորմատիկա և ֆիզիկա» մասնագիտությունը, որը գործում էր 2001թ.-ից, փոխարինվում է «Կիրառական մաթեմատիկա և ֆիզիկա» մասնագիտությամբ, իսկ «Անտառային և անտառապուրակային տնտեսություն» մասնագիտությունը՝ «Բնապահպանություն և բնօգտագործում» մասնագիտությամբ:

Ֆակուլտետն այժմ ունի երկու ամբիոն՝

- Օրագրավորման և ինֆորմացիոն տեխնոլոգիաների,

- Ընդհանուր մաթեմատիկայի և բնագիտության:

Ֆակուլտետի կառուցվածքում գործում է գրադարան, երկու համակարգչային լաբորատորիա՝ հազեցած ժամանակակից լաբորատոր բազայով: Գործում է անվճար համացանց:

Այժմ ֆակուլտետում ուսուցումը կազմակերպվում է «Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա» և «Քարտեզագրություն և կադաստրային գործ» մասնագիտությունների գծով:

Ֆակուլտետի ղեկանն է ֆիզմաթ. գիտ. թեկնածու, դոցենտ **Մանվել Աշոտի Զաքարյանը:**

Հեռ.՝ (+37494) 34-01-13 էլ. փոստ՝ mzakar@mail.ru,
matinform.ephim@yandex.ru

Տնտեսագիտության ֆակուլտետ

Տնտեսագիտության ֆակուլտետը գործում է մասնաճյուղի հիմնադրման օրից: 1994-96 թթ. ֆակուլտետը ղեկավարել են դոցենտներ Ա. Օրդյանը, Մ. Պետրոսյանը և Ս. Առաքելյանը:

Մինչև 2001 թվականը ֆակուլտետում ուսուցումը կազմակերպվում էր «Ընդհանուր տնտեսագիտություն» մասնագիտությամբ: 2001թ.-ից բացվում է երկրորդ՝ «Սոցիալ-մշակութային ծառայություն և զբոսաշրջություն» մասնագիտությունը, որը 2007 թ. վերանվանվում է «Մերվիս»:

Ֆակուլտետն այժմ ունի երկու ամբիոն՝

- Ընդհանուր տնտեսագիտության,
- Տուրիզմի կառավարման և մշակութաբանության:

Այժմ ֆակուլտետում ուսուցումը կազմակերպվում է «Տնտեսագիտության տեսություն» և «Մերվիս» մասնագիտությունների գծով:

Ֆակուլտետի ղեկանն է տեխ. գիտ. թեկնածու, դոցենտ **Նելլի Բաբկենի Խուդավերդյանը:**

Հեռ.՝ /263/4-00-51, 094-11-21-41 էլ. փոստ՝ eco_ib@ysu.am

Կիրառական արվեստի ֆակուլտետ

Իջևանի տարածաշրջանային քոլեջի հիմնադրման պահից՝ 1991թ. մինչև 1994թ., «Դեկորատիվ-կիրառական արվեստ» մասնագիտությունը գործել է Հումանիտար գիտությունների ֆակուլտետի կազմում:

1994թ. «Դեկորատիվ-կիրառական արվեստ» մասնագիտության հիման վրա ձևավորվում է Կիրառական արվեստի ֆակուլտետը, և դեկան է նշանակվում Պողոս Մկրտիչի Կարապետյանը:

1996–2006թթ. ֆակուլտետի դեկանը եղել է ՀՀ նկարիչների միության անդամ, գեղանկարիչ Սպարտակ Հայկի Սարգսյանը:

2006թ.-ից մինչև 2014թ. ֆակուլտետը ղեկավարել է տեխ. գիտ. թեկնածու Կամո Բենիկի Այվազյանը:

Մինչև 2007թ. ֆակուլտետն ունեցել է երկու մասնագիտություն՝ «Կիրառական զարդարվեստ և ժողովրդական արհեստներ» և «Դիզայն»: Այնուհետև ֆակուլտետում ուսուցանվել է միայն «Կիրառական արվեստ» մասնագիտություն:

2014թ.-ից սկսած՝ ֆակուլտետում ուսուցումը կազմակերպվում է «Կիրառական արվեստ» և «Դիզայն/գեղար/», իսկ 2016 թվականից ուսուցում է կազմակերպվում նաև «Համակարգչային գրաֆիկա» մասնագիտություններով:

Ֆակուլտետն այժմ ունի երկու ամբիոն՝

- Գծանկարի, գունանկարի և քանդակի,
- Դեկորատիվ-կիրառական արվեստի և դիզայնի:

Հանրապետության տարբեր քաղաքներում, հատկապես Իջևանում՝ քաղաքային պատկերասրահում և մասնավորապես ֆակուլտետում հաճախ են կազմակերպվում ուսանողների և դասախոսների՝ թեմատիկ լայն ընդգրկում ունեցող ստեղծագործությունների ցուցահանդեսներ, ուսանողական գիտական ընթերցումներ:

Ֆակուլտետի դեկանն է ֆիզմաթ. գիտ. թեկնածու **Ալեքսան
Շամիլի Մարգարյանը:**

**Հեռ` 093-20-65-05, 096-20-65-05 էլ. փոստ` artdekan-
@rambler.ru, sci- ib@ysu.am**

Հեռակա ուսուցման բաժին

Մինչհամալսարանական կրթության և հեռակա ուսուցման բաժինը հիմնադրվել է 2006թ. հոկտեմբերի 27-ին` տարածաշրջանի հիմնարկ-ձեռնարկություններն ու դպրոցները համապատասխան բարձրագույն կրթությամբ կադրերով ապահովելու նպատակով: Սկզբնական շրջանում բաժնի վարիչի պարտականությունները համատեղությամբ իրականացրել է ուսումնամեթոդական բաժնի վարիչ` Արկադի Ցոլակի Դավթյանը: Հեռակա ուսուցման բաժնի վարիչ են եղել տ.գ.թ., դոցենտ Նելլի Բաբկենի Խուդավերդյանը (2007թ.), բ.գ.թ., դոցենտ Ֆելմիրա Արտավազդի Դավթյանը (2008թ.):

Հեռակա ուսուցման բաժնում ուսուցումը տարվում է հետևյալ մասնագիտություններով.

- «Տնտեսագիտության տեսություն»,
- «Մերվիս»,
- «Անգլերեն լեզու և գրականություն»,
- «Պատմություն»,
- «Հոգեբանություն»,
- «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա»,
- «Հայոց լեզու և գրականություն»,
- «Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա»,
- «Կիրառական մաթեմատիկա և ֆիզիկա»,
- «Բնապահպանություն և բնօգտագործում»,
- «Էկոլոգիական քիմիա»,

- «Քարտեզագրություն և կադաստրային գործ»:

Հեռակա ուսուցման բաժնի ուսումնական գործընթացում ընդգրկված է ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի համապատասխան ամբիոնների պրոֆեսորադասախոսական անձնակազմը:

Հեռակա ուսուցման բաժնի վարիչն է բան. գիտ. թեկնածու, դոցենտ **Մարատ Հովհիկի Ջուրաբյանը**:

Հեռ.՝ (263)4-04-50, 093-55-64-01 էլ. փոստ՝ ephim-hub@mail.ru

Համամասնաճյուղային ամբիոն

Մասնաճյուղն ունի Արտակարգ իրավիճակների, մարմնակրթության և սպորտի համամասնաճյուղային ամբիոն, վերջին տարիներին կառուցված և ժամանակակից պահանջներին համապատասխան կահավորված մարզադահլիճ, մարզադահլիճ և սպորտային հրապարակ, որտեղ ուսանողները լիարժեքորեն անց են կացնում սպորտային մարզումներ:

Արտակարգ իրավիճակների, մարմնակրթության և սպորտի համամասնաճյուղային ամբիոնի վարիչն է միջազգային կարգի սպորտի վարպետ **Վարդիթեր Գուրգենի Պողոսյանը**:

Հեռ.՝ (+374263) 4-00-35, 096-04-05-30 էլ. փոստ՝ ysu_ib@ysu.am

Մասնաճյուղն ունի **Տեղեկատվական համակարգերի սպասարկման և զարգացման բաժին**՝ համակարգչային տեխնիկայով հագեցված սրահներով, ապահովված անվճար համացանցով, լեզվի ուսուցման կենտրոններով, որոնք ծառայում են նաև հեռաուսուցման խնդրի լուծմանը:

Մասնաճյուղում գործում են ինտերակտիվ ուսուցման լսարաններ՝ անհրաժեշտ էլեկտրոնային սարքավորումներով, որը ուսանողներին հնարավորություն է ընձեռում, գտնվելով մայրա-

քաղաքից հեռու, skype ծրագրի միջոցով լսել այն առաջատար և եզակի մասնագետներին, որոնք տարաբնույթ պատճառներով չեն կարողանում ժամանել բուհ:

ԵՊՀ ԻՄ-ի անգլերեն լեզու և գրականություն մասնագիտության ուսանողների լեզվական գիտելիքների և հաղորդակցական կարողությունների զարգացման նպատակով անհրաժեշտություն առաջացավ ստեղծելու անգլերեն լեզվի ուսուցման կենտրոն: 2014 թ. մասնաճյուղի և Խաղաղության կորպուսի ջանքերով ստեղծվեց անգլերեն լեզվի ուսուցման կենտրոն՝ հագեցած մասնագիտական գրականությամբ և անհրաժեշտ տեխնիկական սարքավորումներով: Կենտրոնը շարունակաբար համալրվում է գեղարվեստական գրականությամբ, ուսումնամեթոդական ձեռնարկներով, ամսագրերով, ֆիլմերով և լեզվի ուսուցման համար նախատեսված խաղերով: Կենտրոնի ռեսուրսներից օգտվում են ոչ միայն մասնաճյուղի ուսանողները և դասախոսները, այլև Իջեվան քաղաքի դպրոցականները, որոնք ընդգրկված են կենտրոնում գործող «Անգլերեն լեզվի ակումբ»-ի և «Կինո ակումբ»-ի կազմերում: Կենտրոնը դասընթացներ է կազմակերպում նաև մասնաճյուղի ոչ մասնագիտական բաժինների ուսանողների համար:

2015 թ. ֆրանսիական Լիոն քաղաքի «AYO» կազմակերպության հովանավորությամբ մասնաճյուղում ստեղծվել է ֆրանսերեն լեզվի կենտրոն՝ հագեցած ժամանակակից տեխնիկական միջոցներով, մասնագիտական գրականությամբ (մեթոդական և գեղարվեստական), որը հնարավորություն է տալիս ֆրանսերեն լեզվի դասերը վարելու ժամանակակից տեսաձայնային մեթոդներով:

«Համակարգչային գրաֆիկա» մասնագիտության դասընթացն առավել արդյունավետ դարձնելու նպատակով 2016 թ. Կի-

րառական արվեստի ֆակուլտետում բացվեց անհրաժեշտ սարքավորումներով հագեցած համակարգչային սրահ:

ԵՊՀ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԳՐԱԴԱՐԱՆ

Մասնաճյուղն ունի հագեցած գրադարան՝ իր ընդարձակ 2 ընթերցասրահներով, էլեկտրոնային համակարգչային տեխնիկայով: Էլեկտրոնային պաշարները հասանելի են ընթերցասրահի համակարգիչներից, ինչպես նաև համամասնաճյուղային համակարգչային կենտրոնի թիվ 2 սրահից: 2014 թ. թիվ 2 մասնաշենքում ընթերցասրահ հիմնվեց՝ հագեցած Բնական գիտությունների և Կիրառական արվեստի ֆակուլտետների ուսանողներին անհրաժեշտ գրականությամբ:

Ուսումնագիտական գործընթացի արդյունավետ կազմակերպման համար հիմնարար նշանակություն ունի հաստատության գրքային և տեղեկատվական բազան, որը կենտրոնացած է գրադարանում: Տարեցտարի գրադարանի գրքային ֆոնդը համալրվում է ժամանակակից գրականությամբ, համապատասխան տեղեկատվական տարբեր նյութերով, որին նպաստում էր անվճար ինտերնետ կապը, էլեկտրոնային ընթերցասրահի հիմնումը, էլեկտրոնային գրականության հարստացումը: Ուսանողներն ունեն ինչպես ԵՊՀ-ի Սարգիս և Մարի Իգմիրյանների անվան գիտական գրադարանի էլեկտրոնային գրքային ֆոնդից www.lib.ysu.am/, այնպես էլ հանրապետության ֆունդամենտալ գրադարանների էլեկտրոնային պաշարներից օգտվելու հնարավորություններ:

Մասնաճյուղի գրադարանում քիչ քանակով առկա գրականության թվայնացման շնորհիվ էլեկտրոնային պաշարների ֆոնդը պարբերաբար ավելացվում է: Ընթերցասրահն ունի էլեկտրո-

նային գրականության հավաքածու՝ դիսկադարան, որը գրադարանային պաշարների մասն է կազմում և ունի ինքնուրույն էլեկտրոնային ունիվերսալ քարտադարան: Իր ծառայություններով գրադարանն աջակցում է ուսանողների ուսումնառությանը՝ նրանց տրամադրելով մասնագիտական գրքեր, ժողովածուներ, ամսագրեր, էլեկտրոնային գրքեր: Ընթերցասրահն ունի պատճենահանման և տպիչ սարքեր: Ուսանողի ցանկության դեպքում էլեկտրոնային գրականությունը նրան է փոխանցվում կրիչով կամ խտասկավառակով: Գրադարանային ֆոնդում պահանջվող մասնագիտական գրականության բացակայության դեպքում ուսանողներն ստանում են լիարժեք տեղեկատվություն՝ դրա ձեռքբերման վերաբերյալ: Մասնաճյուղի գրքային ֆոնդը համալրվում է սեփական ձեռքբերումների, նաև նվիրատվությունների հաշվին: 2014թ. հունվարին ստեղծվել է ԵՊՀ ԻՄ-ի գրադարանային խորհուրդ, որի հիմնական նպատակն է ապահովել գրադարանի և մասնաճյուղի հիմնական ուսումնական ու գիտական ստորաբաժանումների փոխադարձ կապն ու արդյունավետ համագործակցությունը:

Գրադարանից օգտվելու կանոնները

Գրանցվելու կարգը.

- Գրադարանից օգտվելու իրավունք ունեն ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի պրոֆեսորադասախոսական կազմը, ուսանողները, ուսումնաօժանդակ աշխատակիցները: Այլ բուհերի ներկայացուցիչները գրադարանի ծառայություններից կարող են օգտվել միայն գրադարանի ղեկավարության կողմից սահմանված կարգի համաձայն:

- Գրադարանի բաժանորդ կամ ընթերցող դառնալու համար անհրաժեշտ է ներկայացնել հետևյալ փաստաթղթերը. անձնագիր, եթե ուսանող է, ապա իր կարգավիճակի մասին տեղեկանք ֆակուլտետի ղեկնաստից, իսկ եթե դասախոս է, ապա տե-

ղեկանք կադրերի բաժնից, որտեղ պետք է նշված լինի աշխատանքային պայմանագրի տևողությունը:

- Ընթերցողական քարտն ընթերցողին, տնօրենության սահմանված կարգով, իրավունք է տալիս օգտվելու գրադարանի կողմից մատուցվող ծառայություններից: Այն, կախված ընթերցողի համալսարանական կարգավիճակից, վավեր է որոշակի ժամկետով. բակալավրիատի ուսանողների համար՝ 4 տարի, պրոֆեսորադասախոսական և ուսումնասօժանդակ կազմի համար քարտի ժամկետը կախված է տվյալ աշխատակցի և բուհի միջև կնքված պայմանագրի տևողությունից:

Գրադարանից գիրք դուրս բերելու կարգը.

- Գրանցված ուսանողներին գրականությունը դուրս է տրվում առավելագույնը տասնօրյա ժամկետով՝ գրադարանավարի կողմից համապատասխան փաստաթղթային ձևակերպումից հետո:

- Անհրաժեշտության դեպքում ժամկետը երկարաձգվում է՝ վերագրանցելով գրականությունը:

- Բառարանների, հանրագիտարանների, ձեռագիր, արժեքավոր տպագիր նյութերի հետ ուսանողը աշխատում է ընթերցասրահում:

- Եզակի գրքերը կամ գրադարանային միավորի վերջին օրինակները դուրս են տրվում աշխատանքային օրվա վերջին 30 րոպեների ընթացքում՝ հաջորդ աշխատանքային օրվա առաջին 30 րոպեների ընթացքում այն վերադարձնելու պայմանով:

- Մեկ անձին միաժամանակ տրվող գրականության առավելագույն քանակը 2 միավոր է:

Վնասների փոխհատուցման կարգը.

- Գրականությունը չվերադարձնելու դեպքում յուրաքանչյուր գրադարանային միավորի համար ուսանողը վճարում է տուգանք՝ սահմանված կարգով:

- Գրականությունը հանձնելիս թերությունների հայտնաբերման դեպքում ուսանողը պարտավոր է վճարել վնասված գրքի վերականգնման արժեքի եռապատիկ չափով:

- Գիրքը կորցնելու դեպքում ուսանողը պարտավոր է հատուցել կորցրած գրքի գնի եռապատիկը կամ վերադարձնել նույն հրատարակության այլ օրինակ:

Գրադարանը երկուշաբթիից ուրբաթ աշխատում է ժամը 09¹⁵-17⁰⁰, իսկ շաբաթ օրերին՝ 09¹⁵-15⁰⁰-ն:

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի գրադարանի վարիչն է **Ալվինա Վաղարշակի Առուստամյանը:**

Հեռախոս՝ (+374) 263 4-00-51 էլ. փոստ՝ library_ib@ysu.am

ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ԵՎ ԿԱՐԻԵՐԱՅԻ ԿԵՆՏՐՈՆ

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում գործում է Շրջանավարտների և կարիերայի կենտրոն, որի նպատակներից է մասնաճյուղի ուսանողների մեջ ուսումնառության հետ զուգահեռ աշխատանքային որոշակի փորձի ձևավորումը, կարիերային նպաստող աշխատանքների կազմակերպումը, աշխատանքային շուկայում մասնաճյուղի ուսանողների և շրջանավարտների մրցունակության բարձրացումը: Կենտրոնն իր գործունեությունը իրականացնում է տնօրենության կողմից հաստատված տարեկան աշխատանքային պլան-ժամանակացույցով:

Կենտրոնը շարունակում է համագործակցել տարածաշրջանի պետական և մասնավոր կազմակերպությունների ու տնտեսությունների հետ, որի ընթացքում հստակ տեղեկություններ են տրվում աշխատաշուկայի առկա և հեռանկարային զարգացման միտումների վերաբերյալ: Պարբերաբար կազմակերպվում են սեմինար-դասընթացներ, ուսանողների կարիերայի զարգացմանը նպաստող հանդիպումներ:

Շրջանավարտների և կարիերայի կենտրոնը մասնաճյուղի պաշտոնական էլ. կայքում /www.ijevan.yso.am/ ունի առանձին բաժին՝ «Շրջանավարտ», որն ունի 3 ենթաբաժիններ՝ «Խորհրդատվություն», «Շրջանավարտների և կարիերայի կենտրոն», «Գրանցում»: Առաջին ենթաբաժնում տեղադրված է աշխատանք փնտրելու, ինքնակենսագրություն կազմելու, հարցազրույցի մասնակցելու մասին խորհրդատվություն, երկրորդ ենթաբաժնում ներկայացված են կենտրոնի խնդիրներն ու գործառույթները, իսկ երրորդ ենթաբաժնում՝ շրջանավարտները կարող են գրանցվել՝ թողնելով իրենց տվյալները հետադարձ կապի համար: Բացի այդ՝ “Facebook” սոցիալական ցանցում ստեղծվել է «**ԵՊՀ ԻՄ շրջանավարտ**» էջը, որտեղ պարբերաբար տեղադրվում է աշխատաշուկայի մասին արդի տեղեկատվություն:

Կենտրոնը կազմակերպում է կլոր սեղաններ՝ տարածաշրջանի գործատուների, զբաղվածության կենտրոնի ներկայացուցիչների, ուսանողների, դասախոսների մասնակցությամբ, որտեղ քննարկվում են աշխատաշուկայի արդի պահանջները, ուսանողների անհրաժեշտ մասնագիտական հմտությունների շրջանակը, ներկայացվում են թափուր աշխատատեղերը և կատարվում աշխատանքի ընդունման կոնկրետ առաջարկներ:

Հեռ.՝ (0263) 4-00-51 էլ. փոստ՝ ysuib-career@mail.ru

ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐ

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի ուսանողական կառույցներն են՝
Ուսանողական խորհուրդը և Ուսանողական գիտական ընկերությունը:

Ուսանողական խորհուրդ

Ուսանողների իրավունքների պաշտպանության հարցերով զբաղվող կառույցներից է Ուսանողական խորհուրդը՝ ուսանողների ինքնակառավարման, ընտրովի ներկայացուցչական մարմին, որն իրազեկում է ուսանողներին իրենց իրավունքների ու պարտականությունների մասին, կառավարման մարմիններում ներկայացնում, արտահայտում և պաշտպանում նրանց շահերն ու իրավունքները, մասնակցում մասնաճյուղում ներքին կարգապահության պահպանմանը, կազմակերպում ուսանողական և երիտասարդական տոների անցկացում, մարզական միջոցառումներ, զբաղվում ռազմահայրենասիրական դաստիարակությամբ, աջակցում ուսանողների հանգստի և ժամանցի կազմակերպմանը: Ուսանողների ստվար մասը ընդգրկված է ուսանողական ինքնակառավարման մարմիններում: Ուսանողական խորհրդի գործառույթներից է ուսանողների իրավունքների պաշտպանությունը, որն իրականացվում է մասնաճյուղի ղեկավար մարմիններում խորհրդի ներկայացուցիչ-պատվիրակների միջոցով: Ուսանողները պարբերաբար մասնակցում են ուսանողական խորհուրդների և ֆակուլտետային ուսանողական խորհուրդների նիստերին և քննարկումների միջոցով, ըստ անհրաժեշտության նաև համապատասխան բաժինների օժանդակությամբ, նրանց խնդիրներին տրվում են համապատասխան լուծումներ և պարզաբանումներ:

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի ուսանողական խորհրդի նախագահն է Հումանիտար գիտությունների ֆակուլտետի ուսանող **Իսկուհի Շաղբաթյանը:**

Էլ. փոստ՝ shaghatyan111@mail.ru

Ուսանողական գիտական ընկերություն

Մասնաճյուղում գործում է նաև Ուսանողական գիտական ընկերությունը: Ուսանողները, մասնակցելով կազմակերպված գիտաժողովներին, գիտահանրամատչելի և գիտական զեկուցումներին, ավելի են խորացնում իրենց մասնագիտական գիտելիքները, ձեռք են բերում հետազոտական աշխատանքներ կատարելու հմտություններ, որը նպաստում է հետագայում ուսումը մագիստրատուրայում շարունակող ուսանողների գիտական գործունեության ձևավորմանը:

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի ուսանողական գիտական ընկերության նախագահն է Հումանիտար գիտությունների ֆակուլտետի ուսանող **Ալբերտ Զուրաբյանը**:

Էլ. փոստ՝ zurabyan1@gmail.com

ԿՈՒՐՍԻ ԱՎԱԳԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Յուրաքանչյուր կուրսում առավել կարգապահ և առաջադեմ ուսանողներից կուրսընկերներն ընտրում են ավագ: Խմբի ավագը ենթարկվում է ֆակուլտետի դեկանին, իր խմբին ներկայացնում է նրա բոլոր կարգադրությունների ու ցուցումների մասին:

Կուրսի ավագի գործառույթներն են՝

- դասախոսի հանձնարարությամբ ուսանողների հաճախումների անհատական հաշվառումը,
- ուսանողների չներկայանալու կամ ուշանալու մասին ֆակուլտետի դեկանին ամենօրյա հաղորդում ներկայացնելը՝ նշելով ուշացման պատճառները,
- դասատախտակում կատարված փոփոխությունների մասին ուսանողներին տեղեկացնելը,
- անորակ, ուսումնական պլանով նախատեսված ծրագրի խախտումով անցկացվող դասախոսությունների մասին ֆակուլտետի դեկանին իրազեկելը,

- սահմանված ձևի մատյանի վարումը, որը պահվում է ֆակուլտետի ղեկանատում և ամեն օր՝ դասաժամերից առաջ, հանձնում է դասախոսին, վերջինիս հսկողությամբ նշումներ է կատարում պարապմունքներին ուսանողների հաճախումների վերաբերյալ, իսկ դասախոսը արձանագրում է գործնական պարապմունքներին ուսանողների ակտիվությունը՝ համապատասխան գնահատումներով և ստորագրում դասամատյանում:

ՄՏՈՒԳՄԱՆ ԳՐՔՈՒՅԿ

Բուհ ընդունված յուրաքանչյուր սովորողի ուսումնառության սկզբում տրվում է ստուգման գրքույկ: Ստուգման գրքույկում նշվում են ուսուցման ձևը՝ առկա կամ հեռակա, կրթական աստիճանը, ֆակուլտետը, դասընթացների անվանումները, կրեդիտները, ուսանողի՝ դասընթացներին մասնակցության միավորները, ՄՈԳ-ը, ընթացիկ և եզրափակիչ քննությունների և ստուգարքների միավորները, դասընթացի արդյունարար գնահատականը՝ քննություն ընդունող դասախոսների և ղեկանի ստորագրություններով հաստատված: Գրքույկում ուղղումները ևս պետք է հաստատվեն քննություն ընդունողի ստորագրությամբ:

Ստուգման գրքույկում նշվում են նաև տեղեկություններ պրակտիկայի և ամփոփիչ ատեստավորման վերաբերյալ:

Այլ բուհ տեղափոխվելու կամ բուհից ազատվելու դեպքում ստուգման գրքույկը սովորողից վերցվում է, փոխարենը տրվում է սահմանված նմուշի ակադեմիական տեղեկանք: Այլ բուհից տեղափոխված սովորողին տրվում է ստուգման գրքույկ՝ դրա մեջ ներառելով նախորդ բուհից փոխանցվող և հանձնած տարբերությունների առարկանները, ինչպես նաև ստուգարքներից և քննություններից ստացած գնահատականները:

Ուսանողը պարտավոր է քննությանը ներկայանալ ստուգման գրքույկով:

ՄԱՍ II

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

ԲՈՒՀ-ՈՒՄ ՍՈՎՈՐԵԼՈՒ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ի տարբերություն դպրոցի՝ բուհում սովորելու առանձնահատկությունն այն է, որ գիտելիքների և մասնագիտական հմտությունների հիմնական մասն ուսանողներն ձեռք են բերում ինքնուրույն աշխատանքի շնորհիվ:

Բուհական ուսուցումն իրականացվում է երկու տարբերակով՝ դասախոսություն և ինքնուրույն աշխատանք:

Ինքնուրույն աշխատանքն օգնում է ուսանողին ամրապնդելու և համակարգելու ստացված գիտելիքները, ընդլայնելու աշխարհայացքն ու զարգացնելու մասնագիտական հետագա գործունեության համար անհրաժեշտ որակները:

Որպեսզի հաջողությամբ կատարեք ինքնուրույն աշխատանքը, պետք է պարապել ամեն օր, օրական 3-5 ժամ: Անհրաժեշտ է ինքնուրույն աշխատանքը սկսել կիսամյակի առաջին իսկ օրերից, որպեսզի ձևավորվի որոշակի կարգ և աշխատանքային հավասարաչափ ռիթմ: Աշխատանքը հստակորեն կանոնակարգելու համար հարկ է գործադրել ջանքեր և զարգացնել կամային հատկանիշներ, իսկ այդ ամենի արդյունքում՝ ամենօրյա աշխատանքը կդառնա թե՛ սովորություն, թե՛ պահանջ:

Ինքնուրույն աշխատանքի կազմակերպման կարևորագույն մասն է համակարգումը, այսինքն՝ աշխատանքի, ընդմիջումների, քնի և հանգստի միջև ժամանակի ճիշտ բաշխումը:

Միանման աշխատանքից ուսանողը հոգնում է ավելի շատ, քան տարաբնույթ աշխատանքներ կատարելիս: Ըստ այսմ՝ օրվա

ընթացքում չպետք է սահմանափակվել մեկ առարկայի պարապմունքով, բայց և օրական 2-3 առարկաներից ավելի պարապելն էլ արդյունավետ չէ:

Ի դեպ

Անհրաժեշտ է ճիշտ կազմակերպել ինքնուրույն պարապմունքները. 50 րոպե աշխատելուց հետո պետք է 5-10 րոպե ընդմիջել, իսկ 3 ժամ աշխատելուց հետո՝ 20-25 րոպե: Հակառակ դեպքում հոգնածությունը կհանգեցնի ուշադրության անկայունության: Մտավոր աշխատանքի հոգնությունը թոթափելու համար շատ կարևոր է ֆիզիկական պարապմունքների պարբերաբար անցկացումը, քանի որ մտավոր և ֆիզիկական պարապմունքների հերթագայումը վերականգնում է աշխատունակությունը:

ԼՍԱՐԱՆԱՅԻՆ ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

Ա) ԴԱՍԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

Դասախոսությունը որևէ գիտական-տեղեկատվական թեմայի վերաբերյալ դասախոսի կողմից տրամաբանորեն կառուցված, հետևողական ու պարզ խոսքի շարադրանքն է, որի նպատակն է ուսանողին տալ համապարփակ գիտելիքներ: Ըստ էության՝ դասախոսությունը ուսանողի առջև ուրվագծվող գիտական մի ճանապարհ է, որը նա կարող է միայն անցնել գիտական գրականության ընթերցանության, ուսումնական բնույթի այլ պարապմունքների և ինքնուրույն կատարած աշխատանքների շնորհիվ:

Դասավանդվող առարկաների միջև չկան առավել կամ պակաս կարևոր առարկաներ: Բոլորն էլ անհրաժեշտ են, քանի որ յուրաքանչյուր առարկա կարևոր է մասնագիտական գիտելիքների հարստացման և աշխարհայացքի զարգացման համար: Այնու-

հանդերձ, ուսանողը կարող է ընտրել իր համար առավել դժվար առարկաները և դրանց ավելի շատ ժամանակ տրամադրել:

Դիրքորոշումը դասախոսի նկատմամբ: Հայտնի է, որ դեռ դպրոցական տարիներից վերաբերմունքն ուսուցչի և նրա դասավանդած առարկայի հանդեպ նույնանում է: Սակայն աշակերտական այս մոտեցումից ուսանողը պետք է զերծ լինի, քանզի հաճախ դասախոսությունն են կարդում մարդիկ, որոնց հիմնական գործառույթները ոչ թե դասավանդումն է, այլ գիտական աշխատանքը: Ըստ այսմ՝ ուսանողը պետք է ոչ թե ուշադրություն դարձնի նրա հռետորական ունակությունների որոշ թերություններին, այլ նկատի նրա դասավանդած առարկայի հարցադրումների յուրօրինակ մեկնաբանությունները, նոր և հետաքրքիր մտքերը:

Շփումը դասախոսի և լսարանի միջև այն կարևորագույն գործոններից է, որոնցից կախված է դասախոսության որակը: Դասախոսության համար բավարար չէ միայն դասախոսի գերազանց պատրաստվածությունը: Դասախոսությունը պետք է անցկացվի դասախոսի և ուսանողի համատեղ ջանքերով: Այսինքն՝ ուսանողը նույնպես պետք է լինի դասախոսության ակտիվ մասնակից:

Դասախոսության ընթացքում նյութի իմաստավորման գործընթացն աշխատանքի պարտադիր բաղադրիչն է: Միավլում է նա, ով կարծում է, թե կարևորը գրելն է, իսկ հասկանալը կարելի է հետո: Այնինչ, դասախոսությունը ոչ թե թելադրություն է, այլ նոր նյութի ընկալում և ինֆորմացիայի յուրովի իմաստավորում:

Աշխատանքի հիմնական միջոցները: Նյութի առավել դժվար մասերը, որոնց ընկալման համար դասախոսության ընթացքում ժամանակը չի բավարարում, պետք է նշել, որպեսզի հետագայում դասախոսի հետ դրանք կրկին քննարկվեն: Պետք չէ ամաչել

հարցեր տալուց, քանի որ հարցերը վկայում են նյութն առավել լավ յուրացնելու ձգտման մասին: Մյուս ուսանողների հարցերի վերաբերյալ նույնպես եղե՛ք ուշադիր, քանզի նրանք կարող են լինել այնպիսի հարցեր, որոնք Ձեր մտքով չեն անցել, և դրանց պատասխանները Դուք նույնպես կդժվարանայիք գտնել:

Յուրաքանչյուր դասախոսությունից առաջ անհրաժեշտ է կարդալ նախորդ դասախոսության նյութը, քանի որ պատրաստված ուսանողը հեշտությամբ է ընկալում թեմայի շարունակությունը և նոր հասկացությունները: Ինչ խոսք, կիսամյակի ընթացքում կրկնվող նյութն ավելի դյուրին է յուրացվում, ինչն էլ, բնականաբար, օգնում է քննություններին առավել պատրաստված ներկայանալուն:

Ի դեպ

- Դասախոսությունից առաջ անհրաժեշտ է կարդալ գրառումները և վերհիշել նախորդ դասախոսությունը:
- Ուղղել սխալները, բացել կրճատումները և լրացնել բաց թողնված տեղերը:
- Դասախոսության գրառումները համեմատել ձեռնարկի համապատասխան թեմայի հետ՝ կատարելով անհրաժեշտ լրացումներ և շտկումներ:
- Գրառումների մեջ ընդգծել կարևոր հատվածները:

Բ) ՄԵՄԻՆԱՐ

Մեմինարը խմբային գործնական պարապմունքների հիմնական տեսակներից է, որի ընթացքում ուսանողը սովորում է բանավոր շարադրել նյութը, պաշտպանել իր տեսակետները և եզրահանգումները: Մեմինարի կարևորագույն բաղադրիչներից է ուսանողի ելույթը համակուրսեցիների առջև: Փաստարկված պատասխանների արագ գտնումը, ուշադրության արագ կենտրոնացումը մի խնդրից մյուսի վրա ուսանողի մեջ զարգացնում

են մտավոր այն հատկանիշները, որոնք անհրաժեշտ են նրան մասնագիտական հետագա գործունեության համար:

Մեմինար պարապմունքների ժամանակ շատ կարևոր է սեփական մտքերի լիարժեք շարադրումը:

Հարկ է նշել, որ ուսանողների մեծ մասը լավ չի տիրապետում բանավոր խոսքին, ուստի խոսելու ընթացքում անհրաժեշտ է ուշադրություն դարձնել ոչ միայն լեզվի բառապաշարին և քերականական կառույցներին, այլև ճարտասանության և հոետորական արվեստին:

Ի դեպ

- Եթե Դուք զգում եք, որ լավ չեք տիրապետում բանավոր խոսքին, ապա կազմե՛ք շարադրվող նյութի պլանը: Հիշեք՝ միայն պլանը, այլ ոչ թե համառոտ պատասխանները, քանի որ այդ դեպքում Դուք մեխանիկորեն կարդալու եք այն:

- Աշխատե՛ք պատասխանել՝ հետևելով պլանի կետերին:
- Աշխատե՛ք չհուզվել, քանի որ Դուք գտնվում եք Ձեր ընկերների շրջապատում, իսկ նրանք բարիացկամ են տրամադրված Ձեր հանդեպ:

- Աշխատե՛ք հստակ կառուցել Ձեր խոսքը:
- Աշխատե՛ք տվյալ հարցի վերաբերյալ նախօրոք բարձրաձայն շարադրել Ձեր մտքերը:

- Հաղթահարեք լսարանի առջև ելույթ ունենալու բարդույթը, համարձակ մասնակցե՛ք բանավեճերին և սխալվելու դեպքում էլ երբեք մի՛ հուսահատվեք:

Գ) ԳՈՐԾՆԱԿԱՆ ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐ

Գործնական են կոչվում այն պարապմունքները, որոնք անց են կացվում դասախոսի ղեկավարությամբ և ուղղված են տեսական գիտելիքների խորացմանը և աշխատանքային որոշակի մեթոդների յուրացմանը: Գործնական պարապմունքների ժամա-

նակ ձևավորվում են գիտական գրականության հետ աշխատելու, աղյուսակներ կազմելու և վիճակագրական տվյալներ վերլուծելու հմտությունները:

Մի՛ փորձեք գտնել պատրաստի պատասխաններ և դրանք ներկայացնել որպես Ձեր կողմից կատարված աշխատանք: Ավելի ճիշտ և օգտակար է տվյալ թեմայի վերաբերյալ խորապես ուսումնասիրել տեսական նյութը և ինքնուրույն լուծում տալ առաջադրված խնդիրներին:

Ի դեպ

Նշենք, որ առաջադրված խնդիրների յուրօրինակ լուծումները նպաստում են մտավոր կարողությունների զարգացմանը:

Դ) ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆ (ԿՈՆՍՈՒԼՏԱՑԻԱ)

Խորհրդատվության ժամանակ ուսանողները պարզաբանում են անհասկանալի հարցերը, դասախոսության բովանդակության կամ մեթոդիկայի հետ կապված խնդիրները, ինչպես նաև «լրացնում» են բաց թողած դասախոսությունները:

Խորհրդատվությունը սովորաբար նշանակվում է քննությունից առաջ, և ուսանողները դասախոսի հետ պարզաբանում են քննական հարցերին առնչվող խնդիրները:

Խորհրդատվության ներկայանալը պարտադիր չի համարվում, և այդ հանգամանքը նկատի ունենալով՝ որոշ ուսանողներ թերագնահատում են խորհրդատվության նշանակությունը: Իրականում, սակայն, խորհրդատվության ժամանակ ուսանողների և դասախոսի միջև՝ բարեհաճ մթնոլորտում, տեղի է ունենում հաղորդակցում, որը նպաստում է նյութի ավելի լավ յուրացմանը:

ԿՈՒՐՍՍՅԻՆ ԵՎ ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Ուսանողի գիտական ինքնուրույն աշխատանքի կարևորագույն մասն են կազմում կուրսային և ավարտական աշխատանքները: Դրանք ուսումնառության ընթացքում նպաստում են ուսանողի ձեռք բերած գիտելիքների խորացմանը, ընդհանրացմանը և ամրապնդմանը, ինչպես նաև մասնագիտական անհրաժեշտ փորձի կուտակմանը: Գիտական աշխատանքներ կատարելիս ուսանողների մեջ զարգանում են գիտական գրականության հետ աշխատելու ունակություններ և հմտություններ:

Գիտական աշխատանքները հիմնականում կազմված են տեսական և գործնական մասերից: Ուսանողը կուրսային և ավարտական աշխատանքը գրում է ղեկավարի օժանդակությամբ և իր գիտական աշխատանքը, որը ենթակա է գնահատման, պաշտպանվում է հանձնաժողովի առջև:

Գիտական աշխատանքներն ունեն հստակ կառուցվածք և որոշակի ծավալ: Դրանք կատարելուց առաջ ուսանողը պետք է ծանոթ լինի գիտական աշխատանքին ներկայացվող պահանջներին:

Պետական քննությունների հետ մեկտեղ՝ ավարտական աշխատանքը բուհական ուսումնական գործընթացի վերջին փուլն է:

Կուրսային և ավարտական աշխատանքները կատարելիս ուսանողը ձեռք է բերում գիտական ավելի լուրջ աշխատանքներ կատարելու հմտություններ:

Ի դեպ

- Քանի որ գիտական աշխատանքն ունի հստակ կառուցվածք և որոշակի պահանջներ, ուսանողն աշխատանքն սկսելուց առաջ պետք է ծանոթ լինի դրանց: Ներկայացվող պահանջներին կարելի է ծանոթանալ ամբիոնից կամ ղեկավարից:

- Քանի որ հանձնաժողովի առջև պաշտպանությունը գիտական աշխատանքի կարևոր բաղադրիչներից մեկն է, ուստի միայն գիտական աշխատանք գրելը բավարար չէ: Պետք է նաև կարողանալ այն լավագույն կերպով ներկայացնել:

- Քանի որ պաշտպանության համար նախատեսված է հստակ ժամանակ, ուստի աշխատե՛ք Ձեր խոսքը կառուցել այնպես, որ ժամանակը բավարարի: Խոսքը կառուցե՛ք հստակ և սահուն՝ շեշտելով թեմայի գլխավոր հատվածները:

ՊՐԱԿՏԻԿԱ

Ուսումնական գործընթացի կարևորագույն մասն է կազմում մասնագիտական պրակտիկան, որի ժամանակ ուսանողները, ըստ իրենց մասնագիտական կողմնորոշման, այցելում են համապատասխան գիտական ինստիտուտներ, ձեռնարկություններ և այլ հիմնարկներ: Պրակտիկայի բովանդակությունն ու տևողությունը սահմանվում են համապատասխան պետական կրթական չափորոշիչներով և համալսարանի ուսումնական պլաններով: Պրակտիկայի կազմակերպումն ուղղված է ուսանողների մասնագիտական գործունեության տիրապետմանը, որակավորման անընդհատ և հետևողական բարձրացմանը: Համալսարանում գործում են պրակտիկայի հետևյալ տեսակները.

- մանկավարժական,
- ուսումնական,
- արտադրական:

Պետք է ամենայն պատասխանատվությամբ վերաբերվել պրակտիկային, քանի որ դրա ընթացքում ձեռք բերած գործնական հմտություններն անհրաժեշտ են որակյալ մասնագիտացում ստանալու համար:

ՔՆՆԱՇՐՁԱՆԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Բուիում յուրաքանչյուր առարկայի ուսուցումն ավարտվում է քննությամբ կամ ստուգարքով, որոնց անցկացման ընթացքում բացահայտվում է ուսանողի կողմից գիտելիքի յուրացման աստիճանը: Քննական և ստուգարքային փուլերը հեշտությամբ հաղթահարելու համար անհրաժեշտ է քննություններին և ստուգարքներին պատրաստվել ամբողջ կիսամյակի ընթացքում, այլ ոչ թե քննությանը կամ ստուգարքին նախորդող մի քանի օրերին: Սովորաբար հնարավոր չէ քննությանը նախորդող օրերին լիարժեքորեն յուրացնել քննական նյութը: Քննությունը կամ ստուգարքը հաջողությամբ հանձնելու համար անհրաժեշտ է նաև պատրաստվել ընթացիկ սեմինարներին:

Քննության ժամանակ պատասխանելիս պետք է հստակ իմանալ հասկացությունների բնորոշումը, նրանց բովանդակությունը, նյութի կառուցվածքը, հիմնական օրինաչափություններն ու շեղումները, կանոնները և բանաձևերը: Մակայն պետք է նյութը ոչ թե անգիր անել, այլ հասկանալ դասընթացի բովանդակությունն ու տրամաբանությունը:

Ի դեպ

- Քննությանը նախորդող գիշերը չպետք է պարապել, հանգիստ քնե՛ք:
- Շուտ եկե՛ք քննության, որպեսզի անցնի նախնական հուզվածությունը:
- Քննատոմսը վերցրե՛ք՝ առանց երկար մտածելու:
- Քննատոմսը մի՛ կարդացեք դասախոսի սեղանի մոտ, կարդացե՛ք միայն տոմսի համարը:
- Թղթի վրա ազատ տեղեր թողնելով՝ կազմե՛ք առաջին հարցի պատասխանի մոտավոր սխեման, երբ սխեման պատ-

րաստ լինի, ազատ տեղերում կարող էք գրառել առավել համա-
ռոտ պլանը:

- Եթե առաջին հարցին այլևս ավելացնելու բան չունեք, ան-
ցե՛ք երկրորդ հարցին և աշխատե՛ք նույն հաջորդականությամբ:

- Եթե վերցրել էք այնպիսի տոմս, որի հարցին պատասխա-
նելը որոշակի դժվարություններ է պարունակում, մի՛ շտապեք
փոխել տոմսը. նախ՝ փորձե՛ք հիշել այն, ինչ գիտեք այդ տոմսի
հարցերի վերաբերյալ:

- Պատասխանե՛ք միայն բուն հարցին: Մի՛ փորձեք ցույց
տալ Ձեր տեղեկացվածության աստիճանը՝ խոսելով այլ ոլորտ-
ների առնչվող թեմաներից, քանի որ

ա) կարող է այնպիսի տպավորություն ստեղծվել, թե տվյալ
հարցին լավ չեք պատրաստված,

բ) դրանով կարող էք դասախոսին դրդել, որ Ձեզ մի շարք
լրացուցիչ հարցեր տա, ինչը կարող է և Ձեր օգտին չլինել:

- Մի՛ փորձեք խոսքի տեմպի արագացման միջոցով պատ-
մել ավելին: Սակայն պետք չէ նաև շատ դանդաղ խոսել:

- Ուշադրություն դարձրե՛ք դասախոսի բոլոր հարցերին և
դիտողություններին, քանի որ դասախոսը գիտակցաբար կամ ոչ
գիտակցաբար կարող է հուշել հարցի վերաբերյալ իր տեսակետի
մասին, ինչն էլ կարող էք պատասխանելու ընթացքում օգտագոր-
ծել:

- Մի՛ վախեցեք լրացուցիչ հարցերից, քանի որ դրանք դա-
սախոսը հաճախ օգտագործում է որպես Ձեզ օգնելու միջոց:

ԳՐԴՆԱԿԱՆ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ա) ԴԻՄՈՒՄ

Դիմումը հաճախակի օգտագործվող աշխատանքային գը-
րագրության տեքստերից է: Նախընտրելի է այն գրել ձեռագիր,

պարզ և ընթեռնելի: Մեզանից յուրաքանչյուրը միշտ էլ առիթ է ունենում դիմում գրելու վերադասին, տարբեր կազմակերպությունների, պաշտոնատար անձանց: Դրանք հասցեագրված են խնդրանքի տեսքով: Պետք է հիշել, որ դիմումների տեքստերը պետք է լինեն կարճ և հարցը հստակ ձևակերպված:

Դիմումում պետք է նշվեն.

- ո՞ւմ է հասցեագրված (պաշտոնը, պետք է անունը գրել ուղղական, ազգանունը՝ տրական հոլովով),
- ո՞վ է դիմումը գրողը (նշվում է անուն-ազգանունը, հարկ եղած դեպքում պաշտոնը, հասցեն, հեռախոսի համարը, ազգանունը գրվում է բացառական հոլովով),
- փաստաթղթի տեսակի անվանումը,
- տեքստը (հարցը հստակ ձևակերպված),
- ստորագրությունը,
- անուն-ազգանունը,
- ամիս-ամսաթիվ:

Դիմումում ընդունելի է գրել պաշտոնը՝ անուն-ազգանունից առաջ օգտագործելով պարոն, ընկեր, հարգելի դիմելաձևերը, գիտական աստիճանը և կոչումը (եթե գիտեք): Ընդունելի չէ, որ դիմումը սկսում էք որևէ պատմությամբ կամ **Սույնով հայտնում եմ Ձեզ... Ի գիտություն հայտնում եմ Ձեզ... Մեծարգո պարոն Այսինյան, հայտնում եմ Ձեզ այն մասին...** նախադասություններով, կամ հրամայական ոճով՝ **իմացե՛ք, գիտեցե՛ք:** Դիմումում հիմնականում օգտագործում ենք **խնդրում եմ, հայտնում եմ, իրազեկում եմ, ընդունել, ազատել, օգնել, աջակցել, ընդառաջել, տեղափոխել, ներկայացնում եմ, կցում եմ, համաձայն եմ, կանխավ, նախապես, շնորհակալություն, դիմում, տնօրեն, ղեկավար** և այլ բառեր:

Հիշե՛լ, դիմումի վրա բուր չի դրվում, դիմողի վրա՝ պարտադիր դրվում է: Դիմումը չի կնքվում: Խնդրանքը, առաջարկություն-

նը պետք է ձևակերպել անորոշ դերքայով (**օգնել, աջակցել, բավարարել**):

Պաշտոնատար փաստաթուղթ լինելով՝ դիմումը կցվում է համապատասխան գործին, ուստի նրա ձախ կողմում պետք է սպիտակ տարածք թողնվի՝ ըստ պետական ստանդարտի չափորոշման: Եթե դիմումին կից փաստաթղթեր են ներկայացվում, ապա նշվում է նաև՝ «Կից ներկայացնում եմ պահանջվող կամ համապատասխան փաստաթղթեր(ը)»:

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի
հումանիտար գիտությունների ֆակուլտետի
ղեկան պարոն Ա. Ներսիսյանին
նույն ֆակուլտետի «Պատմություն» մասնագիտության
I կուրսի ուսանող Դավիթ Դավթյանից

ԴԻՄՈՒՄ

Հայտնում եմ Ձեզ, որ առողջական խնդիրների պատճառով 2016 թվականի սեպտեմբերի 22-25-ը բացակայել եմ դասերից:

Խնդրում եմ բացակայություններս համարել հարգելի:

Կից ներկայացնում եմ ընտանեկան բժշկի եզրակացությունը:

26.09.2016 Դիմող՝ /ստորագրություն/ Դ. Դավթյան

Բ) ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ինքնակենսագրության մեջ պետք է բացահայտվի տվյալ անձի ողջ էությունը: Ինքնակենսագրությունը, ինչպես և դիմումը ունի իր յուրահատուկ գրելու ձևը և բնույթը, գրվում է ձեռագիր: Աջ-

խատանքային պաշտոնական գրության այս տեքստը պետք է սկսել բուն բացահայտիչով (Ես՝ անուն, ազգանուն, հայրանուն+ս հոդը, առաջին դեմքով):

Ինքնակենսագրությունում նշվում է.

- փաստաթղթի տեսակի անվանումը,
- անուն, հայրանուն, ազգանունը,
- ծննդյան օրը, ամիսը, տարեթիվը,
- քաղաքացիությունը,
- սեռը,
- ծննդավայրը,
- ընտանեկան դրությունը,
- դպրոցը,
- ո՞ր բուհում է սովորում (սովորել/տարեթիվը նշել/),
- ի՞նչ մասնագիտություն ունի և ի՞նչ որակավորմամբ,
- աշխատանքային գործունեությունը (եթե ունի, հիմնարկ-ձեռնարկության, կազմակերպությունների անվանումները, տարեթվերը),
 - ի՞նչ կոչումներ, գիտական աստիճաններ և պարգևներ ունի,
 - ի՞նչ հասարակական և քաղաքական աշխատանքներ է կատարել, կատարում,
 - ի՞նչ ստեղծագործական միության անդամ է,
 - ի՞նչ գրքերի, մենագրությունների, ժողովածուների, գյուտերի հեղինակ է,
 - ի՞նչ առնչություն ունի զինվորական ծառայության հետ,
 - ամուսնական դրությունը (ամուսնացած, ընտանիքի կազմը),
 - ընտանեկան կացությունը (եթե ամուսնացած չէ),
 - բնակության հասցեն,

- հեռախոսը, էլեկտրոնային կապի միջոցներ,
- լեզուների տիրապետումը, համակարգչային ծրագրերի տիրապետումը,
- կուսակցությունը (եթե որևէ կուսակցության կամ կազմակերպության անդամ է),
- ստորագրությունը,
- փաստաթուղթը գրելու ամիս, ամսաթիվը:

Հիշե՛լ, ինքնակենսագրությունը չի վավերացվում կնիքով և չի հաստատվում վերադասի կողմից: Պահանջվում է ինքնակենսագրությունը գրել սեղմ, ճշգրիտ՝ զերծ ավելորդություններից:

ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ես՝ Դավիթ Արամի Դավթյանս, ծնվել եմ 1995 թվականի հունվարի 1-ին Տավուշի մարզի Իջևան քաղաքում:

2013 թվականին ավարտել եմ Իջևանի ավագ դպրոցը: 2013-2015 թվականներին որպես մոտոհրաձգային ջոկի հրամանատար ծառայել եմ ՀՀ զինված ուժերում: 2015 թվականին գորացրվել և նույն տարին ընդունվել եմ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի հումանիտար գիտությունների ֆակուլտետ:

Ուսմանը զուգահեռ զբաղվում եմ շախմատով:

Գերազանց տիրապետում եմ անգլերենին և ռուսերենին, բառարանի օգնությամբ՝ ֆրանսերենին: Ազատ ժամանակ զբաղվում եմ ընթերցանությամբ:

Ամուրի եմ: Ապրում եմ ծնողներիս հետ:

Անկուսակցական եմ:

25.09.2015 /ստորագրություն/ Դ. Դավթյան

Գ) ԼԻԱԶՈՐԱԳԻՐ

Լիազորագիրն այն գրությունն է, որով վստահված անձը լիազորում է ստանալու լիազորվողին հասանելիք գումարը, աշխատավարձը, ապրանքը, կամ նրա անունից կատարելու որոշակի գործողություններ: Այսպիսի լիազորագիրը հաստատվում է տվյալ կազմակերպության ղեկավարի, թաղային համայնքի ղեկավարի, նոտարի կողմից:

Լիազորագիրը նաև կարևոր ֆինանսական փաստաթուղթ է, որն իր գործառնությամբ նույնն է, սակայն ունի էական տարբերություն: Այսպիսի լիազորագրերն ունեն համար (տպատառ), տրվում են կազմակերպության ղեկավարի կողմից, գրվում են լիազորվողի անձնագրային տվյալները (անուն, հայրանուն, ազգանուն, երբ է տրված, ում կողմից, անձնագրի վավերականության ժամկետը), զբաղեցրած պաշտոնը, այն կազմակերպության անունը, որտեղ պետք է ձևակերպումներ կատարվեն գործարքի վերաբերյալ, լիազորագրի ժամկետը, ապրանքի անվանումը, քանակը: Լիազորագիրը ստորագրում է կազմակերպության ղեկավարը, գլխավոր հաշվապահը, լիազորվող անձը և հաստատվում է դրոշմակնիքով ու կլոր կնիքով: Լիազորագրի մեջ նշվում է տրման օրը, ամիսը, տարեթիվը:

Լիազորագիրը գրանցվում է տվյալ կազմակերպության գրանցամատյանում, հաշվապահական հաշվառման մատյաններում: Լիազորագիրը պետք է փակվի տվյալ աշխատանքը կատարելուց հետո, երբ հաշվապահություն են ներկայացվում հաշիվ ապրանքագիրը, ուր նշված են ապրանքի գումարային արժեքը: Երբ սահմանված ժամկետը խախտվում է, ապա լիազորագիրն իր ուժը կորցնում է, և գործարքը չի կարող կատարվել: Այս դեպքում կա՛մ պետք է վերադասի կողմից երկարացվի ժամկետը, կա՛մ տրվի նոր լիազորագիր:

Լիազորագիրն իր մեջ ներառում է.

- փաստաթղթի տեսակի անվանումը,
 - կազմակերպության անվանումը,
 - լիազորագրի տրման օրը, ամիսը, տարեթիվը,
 - գործարք կատարելու ժամկետը,
 - լիազորվողի անունը, ազգանունը, անձնագրային տվյալները,
 - գործարքի անվանումը (թվերով և տառերով),
 - պատվերը կատարող կազմակերպության անունը, հասցեն,
 - կնիքը, կազմակերպության դրոշմակնիքը,
 - կազմակերպության ղեկավարի, հաշվապահի, լիազորվողի անունը, ազգանունը,
 - կազմակերպությունների հաշվարկային և հարկային հաշվեհամարները,
 - եթե ըստ պայմանագրի կատարվել են աշխատանքները՝ պայմանագրի համարը, կնքման օրը, տարեթիվը,
 - լիազորագրի հերթական համարը:
- Լիազորագրում նշվում են միայն ճշտված տվյալները:

ԼԻԱԶՈՐԱԳԻՐ

Ես՝ Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի հումանիտար գիտությունների ֆակուլտետի «Պատմություն» մասնագիտության I կուրսի ուսանող Դավիթ Արամի Դավթյանս, լիազորում եմ եղբորս՝ Տիգրան Արամի Դավթյանին, գրադարանից վերցնելու Հովհաննես Թումանյանի բանաստեղծությունների ժողովածուն:

25.09.2015 Լիազորող՝ /ստորագրություն/ Դ. Դավթյան

Կ.Տ

Դ) ՏԵՂԵԿԱՆՔ

Տեղեկանքը տեղեկատվական պաշտոնական փաստաթուղթ է, որով հաստատվում է տվյալ անձի բնակությունը, աշխատանքը, սովորելու վայրը, ընտանիքի անդամների թիվը, զբաղմունքը, աշխատավարձի չափը: Այն գրվում է պետական հիմնարկի, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կամ իրավասու անձի կողմից նրա մասին որոշակի տեղեկություններ հաղորդելու, ինքնությունը ներկայացնելու:

Տեղեկանքն իր մեջ ներառում է.

- փաստաթղթի տեսակը,
- աշխատանքի, բնակության կամ ուսումնական հաստատության անվանումը,
- ծննդյան թիվը (եթե անհրաժեշտ է),
- տեղեկանքը տրվող անձի պաշտոնը,
- տեղեկանքը տրվելու օրը, ամիսը, տարեթիվը,
- գրանցամատյանի հաշվառման օրը, թվականը, համարը,
- տեղեկանքը ներկայացնելու կազմակերպության անվանումը,
- կնիքը, դրոշմակնիքը,
- տեղեկանք տվող իրավասու անձի անուն-ազգանունը, պաշտոնը,
- տեղեկանք տվող իրավասու անձի ստորագրությունը:

Վարչական, պաշտոնական բնույթի այս փաստաթղթում տրվում են միայն անհրաժեշտ տեղեկություններ՝ առանց ավելորդ բառերի ու արտահայտությունների: Տեղեկանքը, պաշտոնական գրություն լինելով, պատրաստվում է ձևաթղթի կամ դրոշմակնիքված թղթի վրա: Դրոշմակնիքված տեղում լրացվում է համապատասխան թվահամարը, տեղեկանքը տրվելու օրը, ամիսը, տարեթիվը: Տեղեկանքն իրավասու անձի հետ կարող են ստո-

րագրել նաև համապատասխան ծառայությունների ղեկավարները:

ՏԵՂԵԿԱՆՔ

Տրվում է Դավիթ Արամի Դավթյանին, որ նա սովորում է Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի հումանիտար գիտությունների ֆակուլտետի «Պատմություն» մասնագիտության I կուրսում:

Տրվում է ներկայացնելու Իջևանի քաղաքապետարան:

Կ.Տ

25.09.2016 Հումանիտար գիտությունների ֆակուլտետի
ղեկան՝ /ստորագրություն/ Ա. Ներսիսյան

ՄԱՍ III

ԿՐԵԴԻՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐԸ

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ ԲՈԼՈՆԻԱՅԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ

Բարձրագույն կրթության եվրոպական միասնական տարածքի ստեղծման նպատակով 1999 թվականի հունիսի 19-ին 29 եվրոպական երկրների կողմից ընդունվեց Բոլոնիայի հռչակագիրը, որով և հիմք դրվեց Բոլոնիայի գործընթացին:

Բոլոնիայի գործընթացի ուղղություններն են.

- կրթական աստիճանների ճանաչումը (դյուրընթեռնելի և համադրելի աստիճանների համակարգի ընդունում),
 - բարձրագույն կրթության երեք աստիճանների (բակալավ-րիատ, մագիստրատուրա և դոկտորանտուրա) ընդունումը,
 - կրեդիտների համակարգի հիմնումը,
 - ուսանողների, գիտամանկավարժական և վարչական կազմի շարժունության ապահովումը,
 - մասնագետների պատրաստման որակի ապահովման ասպարեզում եվրոպական չափանիշների ընդունումը,
 - բարձրագույն կրթության եվրոպական չափայնության խթանումը,
 - հարատև կրթության կարևորումը,
 - բուհերի և ուսանողների ներգրավումը,
 - Եվրոպական բարձրագույն կրթության գրավչության խթանումը,
 - Եվրոպական բարձրագույն կրթության տարածքի և Եվրոպական հետազոտական տարածքի (ԵՀՏ) համահյուսումը:
- Հայաստանը, միանալով Բոլոնիայի գործընթացին, որոշակի քայլեր է իրականացրել՝ Եվրոպական բարձրագույն կրթության միասնական տարածքին ինտեգրվելու համար:

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում ներդրվել է կրեդիտների կուտակման և փոխանցման եվրոպական համակարգը (ECTS), բոլոր մասնագիտությունների ուսումնական պլանները կազմվել են կրեդիտային համակարգի հենքով:

ԿՐԵԴԻՏՍՅՒՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ԳԱՂԱՓԱՐՆԵՐԸ

Կրեդիտային համակարգն ուսուցման գործընթացի կազմակերպման, ուսումնառության արդյունքների ակադեմիական կրեդիտների միջոցով հաշվառման, կուտակման և փոխանցման համակարգ է, որում համապատասխան որակավորումը շնորհվում է ուսումնական ծրագրով սահմանված կրեդիտների անհրաժեշտ բովանդակության և քանակի կուտակումից հետո:

Կրեդիտը դասընթացով կամ կրթական այլ մոդուլով նախանշված կրթական արդյունքներին հասնելու համար ուսանողից պահանջվող ուսումնական բեռնվածության չափման պայմանական միավոր է: Կրեդիտը չափում է միայն ուսումնական բեռնվածությունը և չի ներառում կրթական ծրագրի այս կամ այն բաղադրամասի յուրացման որակը, դրա մակարդակը կամ բարդության աստիճանը, բովանդակությունը և այլն: Ուսանողը վաստակում է համապատասխան կրեդիտների քանակը տվյալ կրթական մոդուլը հաջողությամբ հանձնելուց հետո:

Կրեդիտների կուտակման և փոխանցման եվրոպական համակարգը (ECTS) համաեվրոպական միասնական կրեդիտային համակարգ է, որն արտահայտում է մեկ ուսումնական տարում ուսանողի լրիվ ուսումնական բեռնվածությունը 60 ակադեմիական կրեդիտներով: Այն նախատեսված է Բարձրագույն կրթության եվրոպական տարածքում ուսանողների կրթական արդյունք-

ների արժևորման, պաշտոնական ճանաչման և բուհից բուհ տեղափոխումը դյուրին դարձնելու նպատակով:

Ուսուցման գործընթացը կրեդիտային համակարգով կազմակերպելիս հստակ սահմանվում են որակավորման շնորհման համար անհրաժեշտ կրեդիտների նվազագույն քանակը, այդ կրեդիտները ձևավորող դասընթացների և այլ բաղադրամասերի բովանդակային կազմը՝ ծրագրի պարտադիր և ընտրովի դասընթացների ցանկի տեսքով, դասընթացներին հատկացված կրեդիտները, ուսուցման ցիկլի նվազագույն և առավելագույն տևողությունները և այլն: Համաձայն բուհի կողմից սահմանված կարգի և ուսումնական ծրագրի պայմանների՝ ուսանողներն իրենք են որոշում՝ երբ, ինչ ժամկետներում և ինչ բովանդակությամբ հավաքել որակավորման համար անհրաժեշտ կրեդիտների պարտադիր նվազագույն քանակը, որից հետո կարող են հայցել համապատասխան որակավորում:

ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՍՏՈՒԳՄԱՆ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԻՄՆԱԴՐՈՒՑԹՆԵՐԸ

1. ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում գործում է ուսանողների գիտելիքների պարբերական ստուգման և գնահատման բազմագործոն համակարգը, որի կիրարկման հիմնական նպատակներն են՝

ա) ուսումնական կիսամյակի ընթացքում գիտելիքների անընդհատ ստուգման և գնահատման օգնությամբ կազմակերպել ուսումնառության համաչափ աշխատանքային գործընթաց, խթանել ուսանողի ինքնուրույն աշխատանքը, ուսումնառության գործընթացում ներմուծել մրցակցության տարրեր և բարելավել դասահաճախումները,

բ) ընթացիկ քննությունների և ստուգումների իրականացման օգնությամբ ներմուծել դիագնոստիկ գնահատման տարրեր՝

գնահատման արդյունքները դասախոսների և ուսանողների կողմից օգտագործելով որպես հետադարձ կապ՝ դասավանդման և ուսումնառության շարունակական բարելավման և կատարողականի բարձրացման նպատակով, բարելավել դասընթացի արդյունարար գնահատման հիմնավորվածությունն ու արժանահավատությունը՝ գիտելիքների գնահատման գործընթացում հաշվի առնելով ուսումնառության տարբեր բաղադրիչները:

2. Գիտելիքների գնահատումը (ստուգումը) ներառում է հետևյալ բաղադրիչները.

ա) դասընթացին ուսանողի մասնակցության գնահատում դասահաճախումների հաշվառման օգնությամբ,

բ) դասընթացի (ուսումնական մոդուլի) ենթաբաժինների և ծրագրով նախատեսված անհատական առաջադրանքների կատարման և յուրացման ընթացիկ ստուգում և գնահատում կիսամյակի ընթացքում (ընթացիկ քննություններ և ստուգումներ),

գ) ամբողջ դասընթացի կամ ուսումնական մոդուլի եզրափակիչ գնահատում քննաշրջանում, ինչը ենթադրում է դասընթացի կամ կրթական մոդուլի համար սահմանված կրթական վերջնարդյունքների ձեռքբերման մակարդակի գնահատում,

դ) ստուգման արդյունքների ինտեգրում՝ դասընթացին ուսանողի մասնակցության աստիճանի, ընթացիկ և եզրափակիչ գնահատումների հիման վրա դասընթացի (ուսումնական մոդուլի) արդյունարար գնահատականի ձևավորում:

3. Ելնելով մասնագիտության ուսումնական պլանով նախատեսված դասընթացների (ուսումնական մոդուլների) աշխատաժավալից, պարապմունքի ձևից, դասավանդման մեթոդներից և հաշվի առնելով դասընթացի կարևորությունը ուսանողի մասնագիտական գիտելիքների և կարողությունների ձևավորման մեջ՝ դասընթացներն ըստ գնահատման ձևի բաժանվում են 2 խմբի՝

- ա) եզրափակիչ գնահատումով դասընթացներ,*
- բ) առանց եզրափակիչ գնահատման դասընթացներ:*

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ա) ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Բակալավրի կրթական ծրագրում յուրաքանչյուր կիսամյակային քննաշրջանում կարող է ներառվել եզրափակիչ գնահատումով առավելագույնը 4 մասնագիտական դասընթաց, բացառությամբ առաջին կիսամյակի, որտեղ այդ դասընթացների քանակը սահմանափակվում է 3-ով:

1. Եզրափակիչ գնահատումով դասընթացը քննաշրջանի ընթացքում անցկացվող եզրափակիչ քննության հետ մեկտեղ նախատեսում է 2 ընթացիկ (միջանկյալ) քննություն.

ա) ընթացիկ քննությունները հիմնականում անցկացվում են գրավոր, իսկ որոշ դեպքերում նաև բանավոր՝ ելնելով դասընթացի դասավանդման և ուսումնառության ձևերից, ինչպես նաև ակնկալվող կրթական վերջնարդյունքների բնույթից: Քննության բանավոր անցկացումը պահանջում է համապատասխան հիմնավորում և թույլատրվում է ֆակուլտետի խորհրդի որոշմամբ,

բ) եզրափակիչ քննությունը հիմնականում անցկացվում է բանավոր, իսկ որոշ դեպքերում նաև գրավոր՝ ելնելով դասընթացի դասավանդման և ուսումնառության ձևերից, ինչպես նաև ակնկալվող կրթական վերջնարդյունքների բնույթից: Քննության գրավոր անցկացումը պահանջում է համապատասխան հիմնավորում և թույլատրվում է ֆակուլտետի խորհրդի որոշմամբ:

2. Եզրափակիչ գնահատումով դասընթացից (ուսումնական մոդուլից) ուսանողի ստացած արդյունարար (կիսամյակային) գնահատականը /միավորը (Գ_{արդ.}) ձևավորվում է կիսամյակի ընթացքում՝ ըստ հետևյալ բաղադրամասերի՝

ա) դասընթացի լսարանային պարապմունքներին ուսանողի մասնակցության աստիճանից, որը լիարժեք իրականացնելու դեպքում ուսանողը վաստակում է 2 միավոր: Դասընթացին ուսանողի մասնակցության $Q_{մաս.}$ միավորը որոշվում է *աղյուսակ 1-ում* բերված սանդղակի չափանիշներին համապատասխան.

Աղյուսակ 1.

Մասնակցության աստիճանը(%)	Հատկացվող միավորը
91-100	2
81-90	1
≤80	0

Օրինակ 1. Եթե 32 լսարանային ժամ աշխատածավալով դասընթացից ուսանողն ունի 15 ժամ բացակայություն, ապա դասընթացին մասնակցության աստիճանը կլինի՝

$$\left\{1 - \frac{15}{32}\right\} * 100\% = (1-0,47) * 100\% = 53\%$$

Համաձայն աղյուսակի՝ $Q_{մաս.} = 0$ միավոր:

Օրինակ 2. Եթե 64 լսարանային ժամ աշխատածավալով դասընթացից ուսանողն ունի 10 ժամ անհարգելի և 4 ժամ հարգելի բացակայություն, ապա դասընթացին մասնակցության աստիճանը կլինի՝

$$\left\{1 - \frac{10}{64-4}\right\} * 100\% = \left\{1 - \frac{1}{6}\right\} * 100\% = 83,3\%$$

Համաձայն աղյուսակի՝ $Q_{մաս.} = 1$ միավոր:

բ) ուսուցանվող նյութի՝ ուսանողի կողմից յուրացման աստիճանի ստուգման նպատակով անցկացվող 2 ընթացիկ (միջանկյալ) քննությունների արդյունքներից ($\Sigma \Phi_{ընթ.}$), որոնցից յուրաքանչյուրին հատկացվում է առավելագույնը 4 միավոր,

գ) եզրափակիչ քննության արդյունքից ($\Phi_{\text{եզր.}}$), որը կարող է գնահատվել մինչև 10 միավոր:

Դասընթացի (ուսումնական մոդուլի) արդյունարար գնահատականը /միավորը հաշվարկվում է որպես գնահատման առանձին բաղադրամասերով վաստակած միավորների գումար՝

$$\Phi_{\text{արդ.}} = \Phi_{\text{մաս.}} + \Sigma \Phi_{\text{ընթ.}} + \Phi_{\text{եզր.}}$$

Ըստ այդմ՝ եզրափակիչ գնահատումով դասընթացն ունի գնահատման հետևյալ սխեման, որտեղ տրված են գնահատման առանձին բաղադրամասերի համար սահմանված հնարավոր առավելագույն միավորները (բոլոր բաղադրամասերը գնահատվում են ամբողջ միավորներով¹).

Աղյուսակ 2.

Գնահատման բաղադրամասը	$\Phi_{\text{մաս.}}$	$\Phi_{\text{ընթ.1}}$	$\Phi_{\text{ընթ.2}}$	$\Phi_{\text{եզր.}}$	$\Phi_{\text{արդ.}}$
Միավորը	2	4	4	10	20

Օրինակ, եթե ուսանողի մասնակցությունը դասընթացին գնահատվել է 1 միավոր, դասընթացի համար նախատեսված 2 ընթացիկ քննություններից նա վաստակել է համապատասխանաբար 3 և 4 միավորներ, իսկ եզրափակիչ քննությունից՝ 6 միավոր, ապա այդ դասընթացի արդյունարար գնահատականը կլինի՝ $\Phi_{\text{արդ.}} = 1 + 3 + 4 + 6 = 14$:

3. Լաբորատոր աշխատանքի ձևեր ունեցող եզրափակիչ գնահատումով դասընթացի ընթացիկ քննությանը ուսանողի մասնակցությունը թույլատրվում է նախորդող ժամանակա-

¹ Ընթացիկ ստուգման մեկ առաջադրանքի արժեքը գնահատվում է առնվազը 1 միավոր, իսկ գնահատման քայրը առնվազը 0.5 է:

հատվածում նախատեսված լաբորատոր աշխատանքների առնվազն 60% կատարողականի (փորձերի կատարում և հանձնում) դեպքում: Հակառակ պարագայում ուսանողին չի թույլատրվում մասնակցել ընթացիկ քննությանը, իսկ քննական ամփոփագրում նրա անվան դիմաց դրվում է «0» միավոր:

4. Առանց եզրափակիչ գնահատման դասընթացը գնահատվում է կիսամյակի ընթացքում ուսումնական նյութի յուրացման աստիճանը որոշող 2 ընթացիկ ստուգումների (գնահատումների) արդյունքներով: Ընթացիկ ստուգումներն անց են կացվում հարցումների, գրավոր /ստուգողական աշխատանքների, անհատական առաջադրանքների (ռեֆերատ, էսսե և այլն) և նման կարգի այլ հանձնարարությունների կատարողականի ստուգման միջոցով: Ընթացիկ ստուգման ձևն ընտրում է դասընթացը կազմակերպող ամբիոնը:

5. Առանց եզրափակիչ գնահատման դասընթացից (ուսումնական մոդուլից) ուսանողի ստացած արդյունարար (կիսամյակային) գնահատականը-/միավորը (Գ_{արթ.}) ձևավորվում է կիսամյակի ընթացքում՝ ըստ հետևյալ բաղադրամասերի՝

ա) դասընթացի լսարանային պարապմունքներին ուսանողի մասնակցության աստիճանից՝ Գ_{մաս.}, որը լիարժեք իրականացնելու դեպքում ուսանողը կարող է վաստակել 2 միավոր: Մասնակցության աստիճանը գնահատվում է համաձայն աղյուսակ 1-ում բերված սանդղակի,

բ) ուսուցանվող նյութի՝ ուսանողի կողմից յուրացման աստիճանի ստուգման նպատակով անցկացվող 2 ընթացիկ ստուգումների արդյունքներից (ՏՄ_{ընթ.}), որոնցից յուրաքանչյուրին հատկացվում է առավելագույնը 9 միավոր:

Դասընթացի (ուսումնական մոդուլի) արդյունարար գնահատականը/միավորը հաշվարկվում է որպես գնահատման առանձին բաղադրամասերով վաստակած միավորների գումար՝

$$Q_{արդ.} = Q_{մաս.} + \Sigma U_{ընթ.}:$$

Ըստ այդմ՝ առանց եզրափակիչ գնահատման դասընթացն ունի գնահատման հետևյալ սխեման, որտեղ տրված են գնահատման առանձին բաղադրամասերի համար սահմանված հնարավոր առավելագույն միավորները (բոլոր բաղադրամասերը գնահատվում են ամբողջ միավորներով²)։

Աղյուսակ 3.

Գնահատման բաղադրամասը	Q _{մաս.}	U _{ընթ.1}	U _{ընթ.2}	Q _{արդ.}
Միավորը	2	9	9	20

Օրինակ, եթե ուսանողի մասնակցությունը դասընթացին գնահատվել է 2 միավոր, դասընթացի համար նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից նա վաստակել է համապատասխանաբար 5 և 7 միավորներ, ապա այդ դասընթացի արդյունաբար գնահատականը կլինի՝ $Q_{արդ.} = 2 + 5 + 7 = 14$ ։

6. Գնահատման՝ վերը նկարագրված եղանակները կիրառվում են միայն մասնագիտական կրթամասի բաղկացուցիչ դասընթացների (ուսումնական մոդուլների) գնահատման համար։ Հումանիտար ու սոցիալ-տնտեսագիտական և մաթեմատիկական ու բնագիտական կրթամասերի բաղկացուցիչ դասընթացների գնահատումն իրականացվում է ավանդական եղանակով (ստուգարք կամ 20 միավորանոց սանդղակով գնահատվող եզրափակիչ քննություն)։ Պրակտիկաները գնահատ-

² Ընթացիկ ստուգման մեկ առաջադրանքի արժեքը գնահատվում է առնվազն 1 միավոր, իսկ գնահատման քայլը առնվազն 0.5 է։

վում են ստուգարքի ձևով: Ավարտական աշխատանքը գնահատվում է 20 միավորանոց սանդղակով:

Բ) ԸՆԹԱՑԻԿ ԵՎ ԵԶՐԱՓՍԿԻՉ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

1. Ընթացիկ և եզրափակիչ քննությունների/ստուգումների ենթակա ուսումնական նյութի բովանդակությունը, քննությունների ձևերը, հարցաշարերը և ժամանակացույցը, ինչպես նաև գնահատման մեթոդներն ու չափանիշները տրամադրվում են ուսանողներին նախապես (կիսամյակի առաջին 2 շաբաթվա ընթացքում):

2. Ընթացիկ և եզրափակիչ քննությունների ժամանակացույցները կազմում են ֆակուլտետները և հաստատվում են ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորի կողմից: Քննությունների հաստատված ժամանակացույցի մեկ օրինակը հանձնվում է ուսումնամեթոդական վարչություն:

3. Ընթացիկ ստուգումները և քննություններն անց են կացվում ուսումնառության կիսամյակի 7÷8-րդ և 15÷16-րդ շաբաթներում (8-րդ կիսամյակում՝ 4-րդ և 8-րդ շաբաթներում): Ընթացիկ ստուգումներն անցկացվում են առարկայի՝ դասացուցակով հատկացված ժամերին կամ դասերից հետո՝ ֆակուլտետի դեկանի որոշմամբ:

4. Եզրափակիչ քննություններն անց են կացվում կիսամյակային քննաշրջաններում՝ 17÷20-րդ շաբաթներում (8-րդ կիսամյակում՝ 9÷10-րդ շաբաթներում):

5. Քննության/ստուգման ավարտից հետո քննությունն ընդունած դասախոսը քննական ամփոփագիրը նույն օրը ներկայացնում է դեկանատ:

6. Բոլոր գրավոր քննությունները և ստուգումները գրանցվում են ուսանողներին տրամադրված սահմանված նմուշի տես-

րերում, իսկ գրավոր աշխատանքի ավարտը վավերացվում է դեկանատի կնիքով:

7. Ընթացիկ և եզրափակիչ քննությունների և ստուգումների գնահատականները հրապարակելու պահից ուսանողն իրավունք ունի այն գանգատարկելու գնահատումն իրականացրած դասախոսին կամ քննական հանձնաժողովին, իսկ վերջինիս հետ անհամաձայնության դեպքում՝ նույն օրը դիմելու դասընթացը կազմակերպող ամբիոնի վարիչին, այնուհետև նաև ֆակուլտետի դեկանին:

Գ) ԳՆԱՀԱՏՄԱՆ ՍԱՆԴՂԱԿԸ ԵՎ ՆՇԱԳՐՈՒՄԸ

1. ԵՊՀ ԻՄ-ում ուսանողի ուսումնառության արդյունքների գնահատման համար կիրառվում է գնահատականների 20 միավորանոց սանդղակը, որը ներկայացված է ստորև.

Գնահատման արդյունարար միավորը	Գնահատականը
18-20	«Գերազանց»
13-17	«Լավ»
8-12	«Բավարար»
0-7	«Անբավարար»
Չն.	«Չներկայացած»
-	«Ստուգված» / «Չստուգված»

Ուսանողի ստուգարքային գրքույկում և դասընթացի քըննական ամփոփագրում գնահատման արդյունարար միավորի հետ մեկտեղ փակագծերում նշվում է նաև համապատասխան գնահատականը (օրինակ՝ 18 (գերազ.)):

2. Դասընթացներից, որոնցից ուսանողը վաստակել է 8-ից ցածր արդյունարար միավոր կամ գնահատվել է «Չստուգված, կրեդիտներ չեն տրվում:

«Ստուգված» գնահատման դեպքում ուսանողի օգտին *վարկանիշային միավորներ*³ չեն գրանցվում, հետևապես այն չի ազդում ուսանողի *միջին որակական գնահատականի (ՄՈԳ)* վրա:

Դ) ՈՒՍԱՆՈՂԻ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐԸ

1. Ուսանողի ուսումնական գործունեության արդյունքներն ու առաջադիմության ցուցանիշներն ուսման որոշակի ժամանակահատվածի կամ ողջ շրջանի ընթացքում վավերագրելու համար ԵՊՀ ԻՄ-ի ֆակուլտետները բուհի յուրաքանչյուր ուսանողի համար, նրա ընդունման պահից սկսած, վարում են ակադեմիական տեղեկագիր, որտեղ յուրաքանչյուր քննաշրջանից հետո գրանցվում են ուսանողի ուսումնասիրած դասընթացները և կրթական մոդուլները, վաստակած կրեդիտները և ստացած արդյունարար գնահատականներն ըստ կրթական մոդուլների և կիսամյակների: Տեղեկագիրն արտացոլում է ուսանողի կատարած ուսումնական աշխատանքի ծավալը և կրթական ձեռքբերումների որակը:

2. Ուսանողի վաստակած կրեդիտները վավերագրվում և կուտակվում են նրա ակադեմիական տեղեկագրում և մնում ուժի մեջ նրա ուսումնառության ողջ շրջանում՝ անկախ ուսումնառության ընդհատումից կամ տվյալ ուսումնական ծրագրի հետագա հնարավոր փոփոխություններից:

³ Վարկանիշային միավորի մասին տե՛ս հաջորդ կետում:

3. Ուսանողի ուսման առաջադիմության ընդհանրացված արդյունքները ներկայացնելու համար ակադեմիական տեղեկագրում կիսամյակային արդյունքներից հետո նշվում են տվյալ կիսամյակի և մինչև ուսման տվյալ ժամանակահատվածն ուսանողի առաջադիմությունն ամբողջացնող ամփոփիչ տվյալները, որոնք ներառում են հետևյալ 4 քանակական ցուցանիշները՝

- գումարային կրեդիտների քանակը,
- գնահատված կրեդիտների քանակը,
- վարկանիշային միավորները,
- միջին որակական գնահատականը:

4. Գումարային կրեդիտը (Կ) կրթական ծրագրի ավարտական պահանջները բավարարելու նպատակով ուսանողի վաստակած կրեդիտների գումարն է:

5. Գնահատված կրեդիտը (ԳԿ) գումարային կրեդիտների այն մասն է, որը գնահատված է թվային միավորներով.

ԳԿ = Կրեդիտ \times :

6. Վարկանիշային միավորը (ՎՄ) յուրաքանչյուր կրեդիտի համար ուսանողի ստացած գնահատականների գումարն է, որը հաշվարկվում է որպես առանձին դասընթացների (մոդուլների) գնահատված կրեդիտների և դրանց արդյունարար գնահատականների արտադրյալների գումար.

$$\text{ՎՄ} = \Sigma \text{Կրեդիտ} \times \text{Գ} ,$$

որտեղ Գ_{արդյ}-ը տվյալ ուսումնական մոդուլից ստացված արդյունարար գնահատականն է:

Օրինակ, եթե ուսանողը 5, 4 և 6 կրեդիտանոց դասընթացներից գնահատվել է (վաստակել է) համապատասխանաբար 12, 16 և 19 միավոր, ապա դասընթացների այդ խմբից ուսանողի վաստակած վարկանիշային միավորը հավասար է՝

$$\varphi U = 5 \times 12 + 4 \times 16 + 6 \times 19 = 238 \text{՝ } 300 \text{ հնարավորից (} 5 \times 20 + 4 \times 20 + 6 \times 20 \text{):}$$

7. Միջին որակական գնահատականը (ՄՈԳ) կրեդիտներով կշռված գնահատականների միջինն է, որը հաշվարկվում է վարկանիշային միավորները գնահատված կրեդիտների գումարի վրա բաժանելով (արդյունքը կլորացվում է 1/100-ի ճշտությամբ)։

$$\text{ՄՈԳ} = \frac{\varphi U}{\varphi \varphi}$$

Օրինակ, նախորդ դեպքում դիտարկված դասընթացների խմբի համար հաշվարկված միջին որակական գնահատականը կլինի՝

$$\text{ՄՈԳ} = \frac{238}{15} = 15.87 \text{՝ } 20 \text{ հնարավորից:}$$

8. Հաշվառվում և ակադեմիական տեղեկագրում գրանցվում են կիսամյակային (հաշվարկված առանձին կիսամյակի համար) և արդյունաբար (հաշվարկված ուսման տվյալ շրջանի համար) վարկանիշային միավորները և ՄՈԳ-երը։

Ե) ՈՒՍՄԱՆ ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅՈՒՆԸ

1. Ըստ ուսման առաջադիմության՝ ուսանողները դասակարգվում են՝ առաջադիմող, փորձաշրջանի կարգավիճակում գտնվող և հեռացման ենթակա։

2. Ուսանողը համարվում է առաջադիմող, եթե՝

ա) կիսամյակում ունի 30 կրեդիտ ուսումնական միջին բեռնվածություն (10% թույլատրելի շեղումով),

բ) հավաքել է տվյալ կիսամյակի համար ուսումնական ծրագրով սահմանված բոլոր պարտադիր դասընթացների 11 կրեդիտները։

3. Ուսանողը համարվում է փորձաշրջանի կարգավիճակում, եթե չի բավարարել նախորդ կետում նշված պայմաններից որևէ մեկը և տնօրենության կողմից նրան թույլատրվել է մասնակցել ակադեմիական պարտքերի մարմանը (լուծարքին):

4. Փորձաշրջանի կարգավիճակ ունեցող ուսանողին հնարավորություն է տրվում ուղղելու թերացումներն ու բացթողումները և բարձրացնելու ուսման առաջադիմությունը ծրագրի նվազագույն պահանջներին համապատասխան:

5. Բակալավրի կրթական ծրագրի համար փորձաշրջանի տևողությունը համընկնում է ակադեմիական պարտքերի մարման (լուծարքի) շրջանի հետ:

6. Փորձաշրջանի կարգավիճակում գտնվող ուսանողը համարվում է հեռացման ենթակա, եթե սահմանված ժամկետում դուրս չի գալիս այդ կարգավիճակից:

Հեռացված ուսանողի վերականգնումը կատարվում է նույն կիսամյակում՝ ուսումնառության նախորդ ընթացքում վաստակած բոլոր կրեդիտների պահպանմամբ:

1. Նույն ուսումնական բեռնվածությամբ ուսանողների ակադեմիական առաջադիմությունները համեմատվում են (ուսանողական նպաստներ, պետական, ներբուհական և այլ տեսակի կրթաթոշակներ հատկացնելիս) նրանց միջին որակական գնահատականներով, իսկ միննույն կրթական ծրագրում ընդգրկված տարբեր ուսումնական բեռնվածություն ունեցող ուսանողներինը՝ վարկանիշային միավորներով:

ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԴԱՍԸՆԹԱՑԻ ԿՐԿՆՈՒՄԸ

1. Քննաշրջանի ընթացքում քննություններին չներկայացած ուսանողներին թույլատրվում է մինչև տվյալ կիսամյակի երրորդ շաբաթվա ավարտը անհատական ժամանակացույցով հանձնել ակադեմիական պարտքերը:

2. Ակադեմիական պարտքերի անվճար հիմունքներով մարումը իրականացվում է տնօրենի հրամանով ձևավորված քննական հանձնաժողովներում: Ակադեմիական պարտքերի մարման վերջնաժամկետ է սահմանվում ընթացիկ կիսամյակի երրորդ շաբաթվա վերջը:

3. Ընթացիկ անբավարար առաջադիմություն ցուցաբերած ուսանողներին, բացառությամբ պարտադիր զինվորական ծառայությունից տարկետման իրավունքով ընդունված ուսանողների, իրավունք է վերապահվում մինչև ավարտական ուսումնական տարվա սկիզբը լրացնելու առավելագույնը 12 կրեդիտ կազմող ակադեմիական պարտքերը՝ վերահանձնելով առարկաները ևս 2 անգամ կամ կրկնելով դրանք:

4. Առանց եզրափակիչ գնահատման դասընթացի գնահատման արդյունարար միավորի նվազագույն 8-ի շեմը չապահոված ուսանողն ակադեմիական պարտքերի մարման (լուծարքի) շրջանում պետք է վերահանձնի ամբողջ դասընթացը, սակայն նրա արդյունարար միավորը չի կարող գերազանցել անցողիկ 8-ը:

Օրինակ, եթե ուսանողի մասնակցությունը դասընթացին գնահատվել է 2 միավոր, դասընթացի համար նախատեսված 2 ընթացիկ ստուգումներից նա վաստակել է համապատասխանաբար 1 և 2 միավորներ, ապա այդ դասընթացի արդյունարար

միավորը կլինի՝ $Q_{արդ.} = 2 + 1 + 2 = 5$, որը ցածր է նվազագույն շեմային պահանջից (8 միավոր): Այս դեպքում ուսանողը պարտքերի մարման շրջանում վերահանձնում է դասընթացը (2 ընթացիկ ստուգումներով գնահատվող ուսումնական նյութը) ամբողջությամբ, սակայն նրա արդյունարար միավորն այս դեպքում չի կարող գերազանցել անցողիկ 8-ը՝ $Q_{արդ.} \leq 8$:

5. Եզրափակիչ գնահատումով դասընթացի գնահատման արդյունարար միավորի նվազագույն 8-ի շեմը չապահոված ուսանողն ակադեմիական պարտքերի մարման (լուծարքի) շրջանում պետք է վերահանձնի եզրափակիչ քննությունը՝ վերջինիս համար սահմանված 10 միավորի ձեռքբերման հնարավորությամբ:

Օրինակ, եթե ուսանողի մասնակցությունը դասընթացին գնահատվել է 2 միավոր, դասընթացի համար նախատեսված 2 ընթացիկ քննություններից նա վաստակել է համապատասխանաբար 1 և 2 միավորներ, իսկ եզրափակիչ քննությունից՝ 2 միավոր, ապա այդ դասընթացի արդյունարար գնահատականը կլինի՝ $Q_{արդ.} = 2 + 1 + 2 + 2 = 7$, որը ցածր է նվազագույն շեմային պահանջից (8 միավոր): Այս դեպքում ուսանողը պարտքերի մարման շրջանում վերահանձնում է միայն եզրափակիչ քննությունը՝ սահմանված 10 միավորի ձեռքբերման հնարավորությամբ, իսկ արդյունարար գնահատականը փոխվում է եզրափակիչ քննության միավորների տարբերությամբ: Օրինակ, եթե եզրափակիչ քննության 2 միավորը լուծարքում բարձրացվել է մինչև 5, ապա՝

$$Q_{արդ.} = 7 + (5-2) = 10:$$

6. Հաջողությամբ հանձնված դասընթացների կրեդիտները կուտակվում են ուսանողի ակադեմիական տեղեկագրում և մնում ուժի մեջ՝ անկախ կիսամյակում ցածր առաջադիմությամբ պայմանավորված ուսման ընդհատման հանգամանքից:

7. Կրեդիտների կուտակման գործառույթի շնորհիվ վերանում է տարբեր պատճառներով ուսումնառությունն ընդհատած և այն վերսկսող ուսանողի կողմից կիսամյակն ամբողջությամբ կրկնելու անհրաժեշտությունը:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՏՈՒ

Ուսումնական խորհրդատուների (կուրսղեկ) ծառայությունը ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում գործում էր նախքան կրեդիտային համակարգին անցնելը: Յուրաքանչյուր կուրսի համար կուրսղեկ էր ընտրված հիմնական մասնագիտական առարկաներ դասավանդող դասախոսներից մեկը: Կուրսղեկը ներկայացնում էր ուսանողների ուսումնական շահերը, ուսումնական գործընթացին վերաբերող հարցերի շուրջ իրակացնում խմբային և անհատական խորհրդատվություններ:

Ներկայումս, ըստ կրեդիտային համակարգով ուսումնական գործընթացի կազմակերպման կարգի, յուրաքանչյուր մասնագիտության ուսանողներին կցվում է հիմնական մասնագիտական առարկաներ դասավանդող դասախոսներից մեկը՝ որպես խորհրդատու:

Խորհրդատուն ներկայացնում է ուսանողների ուսումնական շահերը, ուսումնական գործընթացի հետ կապված տարաբնույթ հարցերի շուրջ նրանց համար պարբերաբար կազմակերպում խմբային և անհատական խորհրդատվություններ:

Խորհրդատուն ուսանողին ծանոթացնում է կրեդիտային համակարգով ուսումնառության ձևին, ուսանողի իրավունքներին և պարտականություններին, մասնաճյուղի ներքին կանոնակարգերին, օգնում է ուսանողին իր ուսումնական ծրագրի համար որոշակի կամընտրական մասնագիտական դասընթացներ ընտրել: Մասնաճյուղի ամբիոններում կազմվում են խորհրդատվական պարապմունքների տարեկան աշխատանքային պլան-ժամանակացույցներ, որոնցով առաջնորդվում են և՛ դասախոսները, և՛ ուսանողները: Խորհրդատվական այս ծառայություններից օգտվում են բոլոր ուսանողները:

Բացի խորհրդատվական ծառայությունից՝ ամբիոնները կազմակերպում են լրացուցիչ մասնագիտական խորհրդատվություն՝ տվյալ կիսամյակում ամբիոնի կողմից դասավանդվող առարկաների գծով: Յուրաքանչյուր ամբիոնում կազմված են նաև լրացուցիչ պարապմունքների ժամանակացույցներ: Պարապմունքներին մասնակցում են այն ուսանողները, ովքեր դասավանդվող առարկաներից ունեն լրացուցիչ բացատրությունների անհրաժեշտություն՝ կապված տվյալ թեման չորացնելու, տվյալ դասից բացակայելու հետ և այլն: Պարապմունքների անցկացման ձևը (տեսական, թե գործնական, գրավոր, թե բանավոր) կախված է ուսանողի հարցերի ծավալից ու բովանդակությունից: Ավելի բարձր կուրսերում խորհրդատվական պարապմունքները ներառում են նաև կուրսային և ավարտական աշխատանքների ոլորտը: Ամեն ուսանողի կցվում է ամբիոնի մեկ դասախոս: Խորհրդատու-դասախոսը օգնում է ուսանողին՝ ճիշտ ընտրելու կուրսային և ավարտական աշխատանքների թեմաները: Նրա դերը նշանակալից է նաև ուսումնական պրակտիկայի հետ կապված գործընթացում: Խորհրդատուն ուղղորդում է ուսանողին՝ ճիշտ ընտրելու պրակտիկական անցկացնելու վայրը,

նախապատրաստում է նրան, իսկ ուսանողը կապ է պահում խորհրդատու դասախոսի հետ՝ պրակտիկայի ընթացքում հանդիպած դժվարությունները հաղթահարելու համար: Նախկինում լրացուցիչ պարապմունքները նախատեսվում էին միայն քննությունների նախաշեմին, իսկ ներկայումս իրականացվում են կիսամյակի ընթացքում: Այս աշխատանքում ընդգրկված են նաև բարձր առաջադիմություն ունեցող ուսանողներ, որոնք օգնում են ակադեմիապես թույլ համակուրսեցիներին՝ պատրաստվելու քննաշրջանին, որը բարձրացնում է լրացուցիչ խորհրդատվական պարապմունքների արդյունավետությունը, նպաստում ուսանողների գիտելիքների ավելացմանը:

ՄԱՍ IV

ԵՊՀ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԵՐ

ԵՊՀ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ (հատված)

Ուսանողի իրավունքները և պարտականությունները

ԵՊՀ ԻՋԵՎԱՆԻ մասնաճյուղի ուսանողն իրավունք ունի՝

1. սեփական հայեցողությամբ, ըստ հակումների և պահանջմունքների, ընտրելու մասնագիտություն, ուսուցման ձև, զբաղվելու հետազոտություններով, ցանկացած կրթական աստիճան ընդհատելու կամ շարունակելու բարձրագույն մասնագիտական կրթությունը,

2. ստանալու գիտության, տեխնիկայի և մշակույթի՝ ժամանակակից մակարդակին համապատասխանող գիտելիքներ, հաճախելու ԵՊՀ ԻՄ-ում կարդացվող դասախոսություններին,

3. մասնակցելու իրենց կրթության բովանդակության ձևակերպմանը (ուսումնական դասընթացների և մասնագիտացման

ընտրությանը)՝ պահպանելով բարձրագույն մասնագիտական կրթության պետական կրթական չափորոշիչների պահանջները,

4. մասնակցելու ուսուցման որակն ապահովող գործառույթներին և գնահատելու պրոֆեսորադասախոսական կազմի գործունեության արդյունավետությունը,

5. բացի ընտրած մասնագիտության ուսումնական դասընթացներից՝ յուրացնելու ուսումնական ցանկացած այլ դասընթաց, որը դասավանդվում է ԵՊՀ ԻՄ-ում՝ ըստ սահմանված կարգի,

6. հիմնական մասնագիտական ուսուցումը համատեղելու երկրորդ մասնագիտական (զուգահեռ) ուսուցման հետ և ստանալու երկրորդ որակավորման աստիճան,

7. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, սույն կանոնադրությամբ և իրավական այլ ակտերով սահմանված կարգով ընդգրկվելու և մասնակցելու ԵՊՀ ԻՄ-ի կառավարման մարմինների աշխատանքներին,

8. օգտվելու ԵՊՀ ԻՄ-ի գրադարանից, լաբորատորիաներից, տեղեկատվական պահոցներից, ուսումնական, գիտական, բուժական, մարզական, առողջարանային, ուսումնաարտարական և այլ ստորաբաժանումների ծառայություններից,

9. ըստ նախասպիրությունների՝ մասնակցելու ԵՊՀ ԻՄ-ում անցկացվող ուսանողական գիտահետազոտական աշխատանքներին, սեմինարներին և գիտաժողովներին,

10. միավորվելու ուսանողական խորհուրդներում, ուսանողական գիտական ընկերություններում և ուսանողական այլ կառույցներում,

11. բողոքարկելու ԵՊՀ ԻՄ-ի ղեկավարության հրամաններն ու կարգադրությունները՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով,

12. օգտվելու ուսանողական նպաստի ձևով ուսման վարձավճարի մասնակի փոխհատուցման իրավունքից՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով,

13. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և ԵՊՀ ԻՄ-ի կողմից սահմանված կարգով ստանալու սահմանված չափի (ներառյալ՝ անվանական) կրթաթոշակ,

14. ծանոթանալու ԵՊՀ ԻՄ-ի կանոնադրությանը և իրավական այլ փաստաթղթերի,

15. լիազորված մարմնի սահմանված կարգով, անհրաժեշտության դեպքում, ստանալու ակադեմիական արձակուրդ՝ մինչև մեկ տարի ժամկետով՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերի,

16. ուսուցման առկա ձևով ուսումնառության դեպքում սովյալ ուսումնական տարվա ընթացքում առնվազն երկու անգամ գտնվելու արձակուրդում՝ առնվազն յոթ շաբաթ ընդհանուր տևողությամբ,

17. հանրակացարանի առկայության և բնակելի տարածքի կարիք ունենալու դեպքերում՝ ԵՊՀ ԻՄ-ի սահմանված կարգով հանրակացարանում ստանալու համապատասխան տեղ,

18. սահմանված կարգով փոխադրվելու մեկ այլ ուսումնական հաստատություն՝ ներառյալ օտարերկրյա պետությունների բարձրագույն ուսումնական հաստատությունները,

19. ուսման բարձր առաջադիմության, հասարակական ակտիվության և գիտահետազոտական աշխատանքներին մասնակցելու համար ստանալու բարոյական և (կամ) նյութական

խրախուսանք՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և ԵՊՀ ԻՄ-ի սահմանված կարգով,

20. ԵՊՀ ԻՄ-ի ուսանողներն ունեն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, սույն կանոնադրությամբ և այլ իրավական ակտերով սահմանված այլ իրավունքներ:

Կրթությունն ընդհատած նախկին ուսանողը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով իրավունք ունի վերականգնվելու ԵՊՀ ԻՄ-ում:

Արգելվում է ուսանողներին արտասուսումնական աշխատանքներում ներգրավելը՝ առանց նրանց և (կամ) նրանց օրինական ներկայացուցիչների համաձայնության:

ԵՊՀ ԻՄ-ի ուսանողները պարտավոր են՝

1. սահմանված ժամկետներում կատարել բոլոր ուսումնական առաջադրանքները,

2. տիրապետել բարձր որակավորում ունեցող ապագա մասնագետի համար անհրաժեշտ գիտելիքներին և հմտություններին,

3. ցուցաբերել ակադեմիական ազնվություն և խուսափել գրագողությունից,

4. անշեղորեն կատարել սույն կանոնադրության, ԵՊՀ ԻՄ-ի ներքին կարգապահական կանոնների և ներքին իրավական ակտերի պահանջները,

5. հաճախել ուսումնական ծրագրերով նախատեսված դասընթացներին,

6. հոգատար վերաբերվել ԵՊՀ ԻՄ-ի գույքին,

7. բարձր պահել ԵՊՀ ԻՄ-ի պատիվն ու հեղինակությունը, պահպանել հասարակական համակցության և բարոյականության նորմերը,

8. վճարովի հիմունքներով կրթություն ստացող ուսանողները պարտավոր են ժամանակին վճարել ուսման վարձավճարը: Ուսման վարձավճարը ժամանակին չվճարելու դեպքում այդ ուսանողները կարող են հեռացվել ԵՊՀ ԻՄ-ից,

9. կատարել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, ԵՊՀ ԻՄ-ի կանոնադրությամբ, ներքին կարգապահական կանոններով, ԵՊՀ ԻՄ-ի ներքին իրավական այլ ակտերով և ուսումնառության պայմանների վերաբերյալ կնքված պայմանագրով նախատեսված պարտականությունները:

**ԵՊՀ ԻԶԵՎԱՆԻ ՄԱՍՆԱԸՅՈՒՂԻ ՆԵՐՔԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ
ԿԱՆՈՆՆԵՐԸ
(հատված)**

Աշխատանքային և ուսումնական հաջողությունների խրախուսումը

46. Աշխատանքային պարտականությունների օրինակելի կատարման, աշխատանքի արդյունավետության բարձրացման, անբասիր աշխատանքի, աշխատանքում նորամուծությունների և այլ ձեռքբերումների, գիտահետազոտական և հասարակական աշխատանքներին ակտիվ մասնակցություն ցուցաբերելու համար աշխատողների և սովորողների համար սահմանվում են հետևյալ խրախուսումները.

- միանվագ դրամական պարգևատրում,
- պատվոգրի, շնորհակալագրի, մեդալի հանձնում,
- հուշանվերով պարգևատրում,
- կարգապահական տույժի հանում,
- լրացուցիչ վճարովի արձակուրդի տրամադրում:

Խրախուսանքը հայտարարվում է տնօրենի հրամանով և դրա մասին ծանուցվում է տվյալ աշխատողին և սովորողին, ինչպես նաև տեղեկացվում է համապատասխան աշխատանքային կոլեկտիվին և կուրսին:

Պատասխանատվությունն ուսումնական կարգապահության խախտման դեպքում

55. Այն սովորողները, ովքեր չեն կատարում ուսումնական պլանները և ուսումնական գործընթացի ժամանակացույցը, ցուցաբերում են ակադեմիական անբավարար առաջադիմություն, խախտում են ՀՀ օրենսդրության, մասնաճյուղի կանոն-

նադրության, մասնաճյուղի ներքին իրավական ակտերի պահանջները, մասնաճյուղի ներքին կարգապահական կանոնները, տնօրենի կամ նրա կողմից լիազորված անձի հրամանով կարող են ենթարկվել կարգապահական տույժերի՝ ընդհուպ մինչև համալսարանից հեռացվելը:

56. Սովորողի կողմից ՀՀ օրենսդրությամբ, մասնաճյուղի կանոնադրությամբ նախատեսված պարտականությունների, ներքին կարգապահական կանոնների խախտման դեպքում նրա նկատմամբ կիրառելի են հետևյալ կարգապահական **տույժերը**.

ա) նկատողություն,

բ) խիստ նկատողություն,

գ) հեռացում մասնաճյուղից:

Կիրառված կարգապահական տույժի մասին սահմանված ժամկետում ծանուցվում է սովորողին և տեղեկացվում է նրա կուրսին:

57. Մինչև կարգապահական տույժի կիրառումը սովորողից պետք է պահանջել գրավոր բացատրություն: Բացատրության բացակայությունը պետք է հաստատվի սովորողի կողմից այն չներկայացնելու վերաբերյալ համապատասխան ակտով:

58. Կարգապահական տույժը կարող է կիրառվել արարքի բացահայտումից ոչ ուշ, քան մեկ ամսվա և կատարումից ոչ ուշ, քան վեց ամսվա ընթացքում՝ չհաշված սովորողի հիվանդության կամ արձակուրդի մեջ գտնվելու ժամանակահատվածը:

1. Եթե կարգապահական տույժի ենթարկվելու օրվանից հետո մեկ ուսումնական տարվա ընթացքում սովորողը չի ենթարկվել նոր կարգապահական տույժի, ապա դա համարվում է մարված:

59. Ուսումնական կիսամյակի ընթացքում դասերից 30 և ավելի անհարգելի ժամ բացակայության դեպքում համապատաս-

խան ֆակուլտետի դեկանի կողմից տվյալ ուսանողին հայտարարվում է նկատողություն:

60. Հեռակա ուսուցման համակարգում ուսումնական կիսամյակի ընթացքում դասերից 20 և ավելի ժամ անհարգելի բացակայության դեպքում հեռակա ուսուցման բաժնի վարիչի կողմից տվյալ ուսանողին հայտարարվում է նկատողություն:

61. Ուսումնական կիսամյակի ընթացքում դասերից 60 և ավելի ժամ անհարգելի բացակայության դեպքում տնօրենի կողմից տվյալ ուսանողին հայտարարվում է խիստ նկատողություն:

Հեռակա ուսուցման համակարգում ուսումնական կիսամյակի ընթացքում դասերից 40 և ավելի ժամ անհարգելի բացակայության դեպքում մասնաճյուղի տնօրենի կողմից տվյալ ուսանողին հայտարարվում է խիստ նկատողություն:

62. Սովորողը կարող է հեռացվել (ազատվել) ԵՊՀ Իջևանի մասնաճյուղից՝

1. իր դիմումի համաձայն,
2. այլ բուհ տեղափոխվելու դեպքում,
3. դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով ազատազրկման դատապարտվելու դեպքում,
4. առկա ուսուցման ուսումնական կիսամյակի ընթացքում դասերից 90 և ավելի ժամ անհարգելի բացակայության դեպքում,
5. հեռակա ուսուցման ուսումնական կիսամյակի ընթացքում դասերից 80 և ավելի ժամ անհարգելի բացակայության դեպքում,
6. տվյալ ուսումնական տարվա (կիսամյակի) ուսումնական վարձը սահմանված ժամկետում չվճարելու դեպքում,
7. մասնաճյուղի ներքին կարգապահական կանոնները կոպիտ կերպով խախտելու դեպքում, ինչպես նաև մեկ ուսումնական տարվա ընթացքում երկու և ավելի անգամ սույն կանոնա-

կարգով նախատեսվում է կարգապահական տույժի ենթարկվելու դեպքում,

8. ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի նախնական պաշտպանության ընթացում աշխատանքում բացահայտված գրագողության դեպքում,

9. ՀՀ օրենսդրությամբ, մասնաճյուղի կանոնադրությամբ, ներքին կարգապահական կանոններով և ներքին իրավական ակտերով նախատեսված այլ դեպքերում:

Չի թույլատրվում սովորողին հեռացնել հիվանդության, արձակուրդների, ակադեմիական արձակուրդի կամ հղիության և ծննդաբերության արձակուրդի ընթացքում:

63. Ուսանողը հեռացվում է ԵՊՀ Իջևանի մասնաճյուղից ակադեմիական ազնվության վարքուկանոնների խախտման, մասնավորապես՝ ընթացիկ և եզրափակիչ քննությունների կամ ստուգարքների ընթացքում տեխնիկական միջոցների կիրառմամբ կամ ցանկացած այլ մեթոդով կատարված արտագրության (արտագրության փորձի), սղագրության դեպքերում: Նշված դեպքերում քննությունն ընդունող դասախոսը դադարեցնում է տվյալ սովորողի քննությունը, նրան հեռացնում է քննասենյակից և քննությունից անմիջապես հետո զեկուցագիր է ներկայացնում ֆակուլտետի դեկանին ուսանողի նկատմամբ կարգապահական տույժ կիրառելու և նրան համալսարանից հեռացնելու նպատակով մասնաճյուղի տնօրենին միջնորդություն ներկայացնելու համար:

Ուսումնական կարգապահություն

64. Ուսումնական տարին բաղկացած է երկու կիսամյակներից և սկսվում ու ավարտվում է համաձայն ուսումնական պլանի:

65. Մասնաճյուղում սահմանվում են ուսումնական պարապմունքների հետևյալ հիմնական տեսակները.

- դասախոսություն,
- գործնական,
- սեմինար և լաբորատոր պարապմունքներ,
- խորհրդատվություն,
- ուսումնական և արտադրական պրակտիկա:

66. Դասացուցակը հաստատվում է Ուսումնամեթոդական վարչության պետի կողմից և դասերը սկսելուց առնվազն 7 օր առաջ սահմանված կարգով հրապարակվում է:

67. Լսարանային բոլոր տեսակի պարապմունքների ակադեմիական ժամը 40 րոպե է: Ուսումնական դասերի տևողությունը հաստատվում է ակադեմիական ժամերով: Որպես կանոն, մեկ պարապմունքը միավորում է երկու ակադեմիական ժամ, որի ավարտից հետո դասամիջոցը սահմանվում է 5-10 րոպե, իսկ պարապմունքների միջև դասամիջոցը՝ 10-20 րոպե:

ԿԱՐԳ

**ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ
ԵՎ ԴՐԱՆՑՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԳՐԱՆՑՄԱՆ
(հատված)**

Ուսանողի կողմից դասընթացի ընտրություն

• Ուսանողը, մասնագիտությունից անկախ, բակալավրի որակավորման աստիճան ստանալու համար ծրագրի կատարման արդյունքում պետք է կուտակի 240 կրեդիտ ուսումնական բեռնվածություն, իսկ մագիստրոսի որակավորման աստիճան ստանալու համար՝ 120 կրեդիտ ուսումնական բեռնվածություն:

• Ուսանողն ուսումնառության ընթացքում իր մասնագիտական ուսուցման համար իրավունք ունի ընտրելու մասնաճ-

յուղի կողմից առաջարկվող ընտրովի դասընթացներ՝ ուսումնական ծրագրերի պահանջներին համապատասխան:

- Դասընթացները, ըստ յուրացման բնույթի, բաժանվում են երկու հիմնական խմբի՝

 - ա/ պարտադիր դասընթացներ,

 - բ/ կամընտրական դասընթացներ:

- Պարտադիր դասընթացներն ամրագրված են յուրաքանչյուր կիսամյակում և պարտադիր են ուսանողի համար:

- Կամընտրական դասընթացները առաջարկվող ցանկից ընտրում է ուսանողը, իսկ յուրացման կիսամյակը կարող է լինել ինչպես ամրագրված, այնպես էլ ազատ:

- Կամընտրական դասընթացների ցանկը պարունակում է համեմատաբար ազատ բովանդակային կառուցվածք և կազմված է մեկից ավելի առարկաներից, որոնցից ուսանողը հնարավորություն ունի ընտրել մեկը:

Ուսանողի կողմից դասընթացում ընդգրկվելը և գրանցումը

- Դասընթացների ընտրության և անհատական ուսումնական ծրագրերի կազմման գործընթացներում ուսանողին օգնում է ուսումնական խորհրդատուն/կուրատորը:

- Ուսումնական խորհրդատուն կազմակերպում է դասընթացն ընտրող ուսանողների և այդ դասընթացը սպասարկող ամբիոնների մասնագետների հետ հանդիպումներ՝ ծրագրերին ծանոթացնելու համար:

- Ուսումնական խորհրդատուի կողմից դասընթացի ընտրությունը գրանցվում է անհատական թերթիկում և ստորագրվում է ուսանողի կողմից:

- Դասընթացի ընտրության ժամանակ ակադեմիական խումբ չձևավորվելու դեպքում ուսանողին տրվում է կրկնակի ընտրության հնարավորություն:

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ
ԵՊՀ ԻԶԵՎԱՆԻ ՄԱՍՆԱԶՅՈՒՂԻ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ
ՆՊԱՍՏՆԵՐԻ, ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՆԵՐՔՈՒՀԱԿԱՆ
ԿՐԹԱԹՈՇԱԿՆԵՐԻ ՀԱՏԿԱՑՄԱՆ
(հատված)

**Ա) ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՀԱՏԿԱՑՄԱՆ ԿԱՐԳՆ
ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ**

5. Ուսանողական նպաստը լրիվ կամ մասնակի փոխհատուցում է ուսանողի ուսման վարձավճարը՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի ծախսային մասում նախատեսված միջոցների, ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի ֆինանսական միջոցների, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրների հաշվին:

6. Պետության կողմից ուսանողական նպաստի ձևով ուսման վարձավճարի լրիվ փոխհատուցում տրամադրվում է՝

6.1. մեկ ուսումնական տարվա ընթացքում սահմանված ժամկետներում հանձնված (առանց լուծարքային շրջանի) քննությունների և ստուգարքների արդյունքներով առավել բարձր գնահատականներ ունեցող ուսանողներին՝ մրցութային կարգով,

6.2. օրենքով նախատեսված հետևյալ սոցիալական խմբերում ընդգրկված անձանց՝

ա) առանց ծնողական խնամքի մնացած ուսանողներին և նրանց թվին պատկանող անձանց՝ համաձայն «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի,

բ) 1-ին և 2-րդ խմբերի հաշմանդամներին և հաշմանդամ երեխայի կարգավիճակ ունեցող անձանց՝ համաձայն «Հայաստա-

նի Հանրապետության հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի,

զ) զոհված զինծառայողի երեխա-ուսանողներին՝ համաձայն «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքի,

դ) պարտադիր ժամկետային զինվորական ծառայության ընթացքում հաշմանդամ դարձած ուսանողներին՝ համաձայն «Զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին» ՀՀ օրենքի,

ե) պետության համար առաջնահերթություն և կարևորություն ներկայացնող մասնագիտություններով նպատակային ուսուցմամբ ընդունված ուսանողներին: Ընդհանուր մրցույթից դուրս, պարտադիր ժամկետային զինվորական ծառայությունից զորացրված, ՀՀ կառավարության կողմից հատկացված անվճար տեղերի հաշվին ընդունված ուսանողները, որպես նպատակային ուսուցմամբ ընդունվածներ, օգտվում են իրենց արտոնությունից մինչև ուսումնառության ավարտը:

6.3. Պետությունն ուսանողական նպաստի ձևով ուսման վարձավճարի մասնակի փոխհատուցում տրամադրում է յուրաքանչյուր տարի Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության կողմից սահմանված ուսանողի միջին որակական գնահատականի նվազագույն շեմը հաղթահարած և ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված՝ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից յուրաքանչյուր տարի սահմանվող անապահովության սահմանային միավորից բարձր միավորներ ունեցող հետևյալ խմբերին՝

ա) մինչև 5 միավորով բարձր անապահովության միավոր ունեցող ընտանիքի անդամ հանդիսացող ուսանողներին՝ ուսման վարձի 50 տոկոսի չափով.

բ) 5-10 միավորով բարձր անապահովության միավոր ունեցող ընտանիքի անդամ հանդիսացող ուսանողներին՝ ուսման վարձի 60 տոկոսի չափով.

զ) 10-15 միավորով բարձր անապահովության միավոր ունեցող ընտանիքի անդամ հանդիսացող ուսանողներին՝ ուսման վարձի 70 տոկոսի չափով.

դ) 15-20 միավորով բարձր անապահովության միավոր ունեցող ընտանիքի անդամ հանդիսացող ուսանողներին՝ ուսման վարձի 80 տոկոսի չափով.

ե) 20-ից բարձր անապահովության միավոր ունեցող ընտանիքի անդամ հանդիսացող ուսանողներին՝ ուսման վարձի 100 տոկոսի չափով:

6.4. Ուսանողի միջին որակական գնահատականի նվազագույն շեմը յուրաքանչյուր տարի սահմանում է Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությունը:

6.5. Պետության կողմից ուսանողական նպաստի ձևով ուսման վարձավճարի մասնակի փոխհատուցում ստանալու համար ուսանողն իր ընտանիքի անապահովության միավորի վերաբերյալ սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմնի տրամադրած տեղեկանքը յուրաքանչյուր տարի բուհին է ներկայացնում մինչև տվյալ տարվա սեպտեմբերի 10-ը:

7. Սույն կանոնակարգի 6,2 կետի ա), գ), և ե) ենթակետերում նշված կարգավիճակ ունեցող ուսանողներին ուսանողական նպաստի ձևով ուսման վարձավճարի լրիվ փոխհատուցում տրամադրվում են 1-ին կուրսից սկսած մինչև տվյալ կրթական ծրագրով ուսումնառության ավարտը:

8. Սույն կանոնակարգի 6,2 կետի բ) և դ) ենթակետերում նշված կարգավիճակ ունեցող ուսանողներին, համապատասխան փաստաթղթերի առկայության դեպքում, ուսանողական

նպաստի ձևով ուսման վարձավճարի լրիվ փոխհատուցում տրամադրվում է 1-ին կուրսի սկզբում և պարտադիր կարգով վերանայվում է յուրաքանչյուր ուսումնական տարվա սկզբում:

9. ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի բակալավրի կրթական ծրագրով առաջին կուրս ընդունված ուսանողներին ուսանողական նպաստի ձևով ուսման վարձավճարի լրիվ փոխհատուցում տրամադրվում է՝ ՀՀ պետական բուհերի ընդունելության կանոններով սահմանված կարգով: Հաջորդ կուրսերում վերոնշյալ ուսանողների ուսանողական նպաստը տրամադրվում է սույն կանոնակարգի 6.1. ենթակետում ամրագրված սկզբունքով:

10. ԵՊՀ Իջևանի մասնաճյուղը, վճարովի համակարգում սովորող ուսանողական համակազմի առնվազն տաս տոկոսին, ուսանողների վարձավճարներից գոյացած բյուջեի առնվազն յոթ տոկոսի չափով, իր միջոցների հաշվին՝ հիմք ընդունելով բարձր առաջադիմությունը և սոցիալական խումբը, իրականացնում է ուսանողական նպաստի ձևով ուսման վարձավճարի մասնակի փոխհատուցում հետևյալ կարգավիճակ ունեցող անձանց.

10.1 սոցիալապես անապահով (ընտանիքների ապահովության սահմանային միավորից բարձր միավոր ունեցող ընտանիքների) ուսանողներին,

10.2 18 տարին լրանալուց հետո առանց ծնողական խնամքի մնացած ուսանողներին մինչև 23 տարին լրանալը,

10.3 23 տարին չլրացած միակողմանի ծնողազուրկ (միա-ծնող) ուսանողներին,

10.4 մինչև մեկ տարեկան երեխա ունեցող ուսանողներին,

10.5 երեք և ավելի անչափահաս, կամ երեք և ավելի ուսանող երեխա ունեցող ընտանիքների ուսանողներին,

10.6 1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամ, ինչպես նաև հաշմանդամ ազատամարտիկ ծնող ունեցող ուսանողներին,

10.7 մարտական հերթապահություն իրականացնող զորամասերում մարտական հերթապահության մեջ ընդգրկված պարտադիր ժամկետային զինվորական ծառայություն անցած ուսանողներին (համապատասխան տեղեկանքի ներկայացման դեպքում),

10.8 սոցիալապես անապահով (ընտանիքների ապահովության գնահատման համակարգում հաշվառված, անապահովության 0 միավորից բարձր միավոր ունեցող ընտանիքների) ուսանողներին,

10.9 ուսանողական նպաստների համակարգում չընդգրկված, երկու կիսամյակ անընդմեջ առավել բարձր առաջադիմություն ցուցաբերած ուսանողներին, որոնք ուսանողական նպաստի ձևով ուսման վարձավճարի լրիվ փոխհատուցման համար անցկացված փոխատեղման մրցույթի արդյունքում զրկվել են նպաստի իրավունքից մինչև 0,1 միավոր տարբերության պատճառով,

10.10 մարտական գործողությունների մասնակիցների (ազատամարտիկների) երեխա ուսանողներին (համապատասխան փաստաթղթերի ներկայացման դեպքում),

10.11 հեռավոր լեռնային և սահմանամերձ գյուղերի հանրակրթական դպրոցների ուսուցիչների (երկու ծնողները) երեխա ուսանողներին,

10.12 ԵՂՉ ԻՄ-ում հիմնական աշխատանքային պայմանագրով աշխատող-ուսանողներին և նրանց երեխա-ուսանողներին,

10.13 առանձնահատուկ դեպքերում, ԵՂՉ ԻՄ-ի տնօրենի որոշմամբ՝ այլ կարգավիճակ ունեցող ուսանողներին:

10.14 Երևանի պետական համամալսարանի կողմից անցկացվող դպրոցականների օլիմպիադայում 1-ին, 2-րդ, 3-րդ կարգի դիպլոմի արժանացած ուսանողներին:

11. Սույն կանոնակարգի 10-րդ կետով սահմանված կարգավիճակ ունեցող ուսանողներին տրամադրվող ուսանողական նպաստի ձևով ուսման վարձավճարի մասնակի փոխհատուցման չափը սահմանվում է՝

11.1. Սույն կանոնակարգի 10.8.և 10.10 ենթակետերում նշված ուսանողների համար՝ 20 տոկոսի չափով:

11.2. Սույն կանոնակարգի 10.2.,10.3.,10.4.և 10.9. ենթակետերում նշված ուսանողների համար՝ 50 տոկոսի չափով:

11.3. Սույն կանոնակարգի 10.1., 10.5., 10.6., 10.7. և 10.11. ենթակետերում նշված ուսանողների համար՝ 30 տոկոսի չափով:

11.4. Սույն կանոնակարգի 10.12. ենթակետում նշված դեպքերում՝

ա) ԵՊՀ ԻՄ-ում 5-15 տարվա աշխատանքային ստաժ ունենալու դեպքում՝ պրոֆեսորադասախոսական համակազմի աշխատողների համար 60 տոկոսի չափով (մագիստրատուրայում՝ 40 տոկոսի չափով), մյուս տարակարգերի աշխատողների համար 50 տոկոսի չափով (մագիստրատուրայում՝ 30 տոկոսի չափով)։

բ) ԵՊՀ ԻՄ-ում 15 տարուց ավելի մինչև 25 տարվա աշխատանքային ստաժ ունենալու դեպքում՝ պրոֆեսորադասախոսական համակազմի աշխատողների համար 70 տոկոսի չափով (մագիստրատուրայում՝ 50 տոկոսի չափով), մյուս տարակարգերի աշխատողների համար 60 տոկոսի չափով (մագիստրատուրայում՝ 40 տոկոսի չափով): ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում վարչական, գիտական և ուսումնաօժանդակ պաշտոն զբաղեցնող աշխատողները, եթե տվյալ ուսումնական տարում դասավանդում են 0,5 և ավելի դրույքաչափով, օգտվում են սույն կետով պրոֆեսորադասախոսական համակազմի համար սահմանված արտոնություններից:

11.5. Սույն կանոնակարգի 10.13. ենթակետում նշված դեպքերում՝ ԵՊՀ ԻՄ-ի տնօրենի որոշմամբ:

11.6. Սույն կանոնակարգով սահմանված կարգավիճակ ունեցող (ՄՈԳ-ը բակալավրիատում բարձր է 18.00-ից, մագիստրատուրայում՝ 19.00-ից) ցուցաբերած ուսանողների՝ սույն կետով ուսման վարձավճարի մասնակի փոխհատուցման չափն ավելացվում է 10 տոկոսով՝ բացառությամբ սույն կանոնակարգի 10.9-րդ և 10.14-րդ ենթակետում սահմանված դեպքերի:

Սույն կանոնակարգի 10.14-րդ ենթակետում նշված դեպքերում՝ 1-ին կարգի դիպլոմի արժանանալու դեպքում՝ 50 տոկոսի չափով, 2-րդ կարգի դիպլոմի արժանանալու դեպքում՝ 40 տոկոսի չափով և 3-րդ կարգի դիպլոմի արժանանալու դեպքում՝ 30 տոկոսի չափով: 10.14-րդ կետով սահմանված ուսանողական նպաստի ձևով ուսման վարձավճարի մասնակի փոխհատուցումն ուսանողին տրամադրվում է միայն ուսումնառության 1-ին կուրսում:

12. Երկու և ավելի կարգավիճակների համապատասխանող, կամ մի քանի արտոնություններին հավակնելու դեպքում ուսանողը կարող է օգտվել դրանցից միայն մեկից, որի դեպքում կիրառվում է մասնակի փոխհատուցման առավելագույն չափը:

13. Ուսանողական նպաստի ձևով ուսման վարձավճարի մասնակի փոխհատուցումից ուսանողը կարող է օգտվել սահմանված միջին որակական գնահատականի (ՄՈԳ) շեմը հաղթահարելու դեպքում: Անհարգելի պատճառներով (անբավարար գնահատական (չստուգված) ստանալու կամ անհարգելի պատճառով քննությանը (ստուգարքին) չներկայանալու դեպքերում) ակադեմիական պարտքերի մարման շրջանում քննություններ (ստուգարքներ) հանձնած ուսանողները ուսման վարձավճարի մասնակի փոխհատուցման իրավունքից չեն օգտվում:

14. Սույն կանոնակարգի 6.1.-րդ կետի համաձայն տրամադրվող ուսման վարձավճարի լրիվ փոխհատուցման իրավունքից հրաժարվելու վերաբերյալ դիմումներն ընդունվում են մինչև յուրաքանչյուր տարվա հուլիսի 1-ը, և դրանց քննարկումը կազմակերպվում է սույն կանոնակարգի 20-րդ և 21-րդ կետերում նշված մանդատային հանձնաժողովների կողմից:

15. Սույն կանոնակարգի 10-րդ կետի համաձայն՝ ուսման վարձավճարի մասնակի փոխհատուցման վերաբերյալ դիմումներն ընդունվում են առկա ուսումնառության համակարգում սովորող ուսանողների դեպքում՝ յուրաքանչյուր կիսամյակի առաջին վեց շաբաթների ընթացքում, իսկ հետակա ուսումնառության համակարգում սովորող ուսանողների դեպքում՝ դասերի փաստացի սկսելուց հետո երկու շաբաթվա ընթացքում:

16. Հարգելի պատճառով (ակադեմիական արձակուրդ՝ առողջական վիճակի, զինծառայության մեկնելու կամ ուսանողական փոխանակման ծրագրերով արտասահման ուսումնառության գործուղվելու կապակցությամբ, ինչպես նաև իր դիմումի համաձայն) ուսումնառությունն ընդհատած ուսանողը ուսանողական իրավունքները վերականգնելիս պահպանում է նախկինում ունեցած ուսանողական նպաստ ստանալու իրավունքը:

Վերջին հանգամանքը պարտադիր կարգով նշվում է ուսումնառության ընդհատման վերաբերյալ հրամանում:

Ուսանողական նպաստի ձևով ուսման վարձավճարի լրիվ փոխհատուցման իրավունքից օգտվող ուսանողի կողմից հարգելի պատճառով ուսումնառությունն ընդհատելու դեպքում ազատված ուսանողական նպաստը նույն կուրսում տվյալ ուսումնական տարում չի օգտագործվում, և հետագայում ավելացվում է այն կուրսի տվյալ ուսումնական տարվա ուսանողական նպաստներին, որտեղ ուսանողը վերակազմում է իր ուսանողական իրավունքները:

17. Այլ պատճառներով ուսումնառությունն ընդհատած, այլ բուհերից, մասնաճյուղի այլ մասնագիտություններից կամ հեռակա ուսումնառության համակարգից առկա ուսումնառության համակարգ տեղափոխված ուսանողները, ուսման վարձավճարի լրիվ փոխհատուցման իրավունքից կարող են օգտվել ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում (տվյալ մասնագիտությունում), առկա ուսուցման համակարգում մեկ ուսումնական տարի սովորելուց հետո, իսկ ուսման վարձավճարի մասնակի փոխհատուցման իրավունքից՝ առկա և հեռակա ուսումնառության համակարգում մեկ կիսամյակ սովորելուց հետո:

18. Բակալավրիատի և մագիստրատուրայի առկա և հեռակա ուսումնառության համակարգերում սովորող առաջին կուրսի ուսանողները, ուսման վարձավճարի մասնակի փոխհատուցման իրավունքից կարող են օգտվել միայն ուսումնառության 2-րդ կիսամյակից՝ բացառությամբ սույն կանոնակարգի 10.12-րդ կետով սահմանված կարգավիճակ ունեցող ուսանողների, ովքեր ուսման վարձավճարի մասնակի փոխհատուցման իրավունքից կարող են օգտվել ուսումնառության առաջին կիսամյակից: Սույն կանոնակարգի 10.9. կետում սահմանված կարգով ուսման վարձավճարի մասնակի փոխհատուցման իրավունքից կարող են օգտվել միայն առկա ուսուցման համակարգում սովորող ուսանողները՝ սկսած երկրորդ կուրսից:

19. Սույն կանոնակարգի 6.1. ենթակետում նշված ուսանողների համար մրցույթը կազմակերպվում է մինչև յուրաքանչյուր տարվա սեպտեմբերի 1-ը, նախորդող ուսումնական տարվա յուրաքանչյուր կիսամյակի քննաշրջանի համար սահմանված ժամանակահատվածում հանձնած քննությունների և ստուգարքների արդյունքների (ՄՈԳ-ի) հիման վրա: ՄՈԳ-ը հաշվարկվում է ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում գործող գիտելիքների գնահատման

սանդղակի կիրառմամբ (հարյուրերորդականի ճշտությամբ): Հավասար ցուցանիշների դեպքում միավորները հաշվարկվում են առանց կլորացման: Ըստ առաջադիմության՝ ՄՈԳ-ի, ձևավորվում է տվյալ կուրսի տվյալ մասնագիտության ուսման վարձավճարի լրիվ փոխհատուցման իրավունք ունեցող ուսանողների ցուցակը:

20. Սույն կանոնակարգի 19-րդ կետում նշված ցուցակը ֆակուլտետի դեկանի կողմից ներկայացվում է ֆակուլտետի մանդատային հանձնաժողովի քննարկմանը: Մանդատային հանձնաժողովի կազմում ընդգրկվում են ֆակուլտետի դեկանը, դեկանի տեղակալը, արհրյուրոյի նախագահը, ուսանողական խորհրդի նախագահը, ուսանողական գիտական ընկերության նախագահը և պրոֆեսորադասախոսական կազմի ներկայացուցիչը: Մանդատային հանձնաժողովը, ըստ տվյալ կուրսի տվյալ մասնագիտությանը հատկացված նպաստների թվաքանակի, իրականացնում է մրցույթ և կազմում է ուսման վարձավճարի լրիվ փոխհատուցման իրավունք ունեցող ուսանողների ցուցակը, որը պարտադիր վավերացվում է մանդատային հանձնաժողովի բոլոր անդամների կողմից: Ցուցակի կազմման համար ձևակերպվում է արձանագրություն (2 օրինակից), որտեղ պարտադիր կարգով գրանցվում են մանդատային հանձնաժողովի անդամների կողմից արտահայտված կարծիքները և հնարավոր վերապահումները: Արձանագրությունը և մրցութային ցուցակը ստորագրվում են մանդատային հանձնաժողովի նախագահի և անդամների կողմից:

21. Սույն կանոնակարգի 20-րդ կետում նշված ցուցակները և արձանագրությունները մինչև յուրաքանչյուր տարվա սեպտեմբերի 1-ը համապատասխան ֆակուլտետի դեկանի կողմից ներկայացվում են մասնաճյուղի մանդատային հանձնաժողովի դի-

տարկմանը և հաստատմանը: Մասնաճյուղի մանդատային հանձնաժողովի կազմը հաստատվում է ԵՊՀ ԻՄ-ի տնօրենի հրամանով: Մանդատային հանձնաժողովի կազմում ընդգրկվում են ԵՊՀ ԻՄ-ի փոխտնօրենները, ուսումնամեթոդական վարչության, հաշվապահության, արհեստակցական կազմակերպության և ուսանողական խորհրդի ներկայացուցիչները, իրավախորհրդատուն: Մույն կանոնակարգի 20-րդ կետում նշված ցուցակներում անձշտություններ, վրիպումներ, սխալներ, ինչպես նաև ցուցակների կազմման ընթացակարգի այլ խախտումներ հայտնաբերվելու դեպքերում մասնաճյուղի մանդատային հանձնաժողովն իրավասու է տվյալ մասնագիտության ուսման վարձավճարի լրիվ փոխհատուցման իրավունք ունեցող ուսանողների ցուցակը հետ վերադարձնել տվյալ ֆակուլտետ՝ նոր մրցույթի կազմակերպման պահանջով: Միալներ և ընթացակարգի խախտումներ թույլ տված անձինք ենթակա են կարգապահական տույժերի, որը ձևակերպվում է մասնաճյուղի տնօրենի հրամանով:

22. Մասնաճյուղի մանդատային հանձնաժողովի կողմից հաստատված ցուցակները մեկօրյա ժամկետում հրապարակվում են ֆակուլտետներում (փակցվում են յուրաքանչյուր ֆակուլտետի հրամանների և հայտարարությունների ցուցատախտակին): Ցուցակների վերաբերյալ դիմում-բողոքները երեք աշխատանքային օրվա ընթացքում պետք է ներկայացվեն մասնաճյուղի մանդատային հանձնաժողովին: Նշված ժամկետի ավարտից հետո մասնաճյուղի մանդատային հանձնաժողովը քննարկում է ներկայացված դիմում-բողոքները (եթե այդպիսիք կան), հաստատում է ուսանողական նպաստի ձևով ուսման վարձավճարի լրիվ փոխհատուցում ստացող ուսանողների վերջնական ցուցակները և այն հրամանագրման նպատակով ներկայացնում է մասնաճյուղի տնօրենին:

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի տնօրենի հրամանով ուսման վարձավճարի լրիվ փոխհատուցում ստացող ուսանողների հրամանագրումից հետո, ուսանողների այլ ուսումնական հաստատություն կամ այլ ֆակուլտետ փոխադրվելու, ինչպես նաև համալսարանից ազատվելու դեպքերում ազատված ուսանողական նպաստներն այլ ուսանողների չեն տրամադրվում:

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի տնօրենի հրամանում պարտադիր կարգով նշվում է նպաստի տրամադրման ժամկետը՝ տվյալ տարվա սեպտեմբերի 1-ից մինչև հաջորդ տարվա օգոստոսի 31-ը:

Բ) ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ԱՆՎԱՆԱԿԱՆ ԿՐԹԱԹՈՇԱԿՆԵՐԻ ՀԱՏՎԱՑՄԱՆ ԿԱՐԳՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

23. Պետական կրթաթոշակը պետական ֆինանսական օժանդակություն է գերազանց և լավ առաջադիմություն ցուցաբերած, հասարակական ակտիվ դիրքորոշում ու պատշաճ վարքագիծ դրսևորած ուսանողներին՝ ֆինանսական խրախուսանքի ձևով:

24. Ուսանողների հասարակական ակտիվ դիրքորոշումը բնութագրվում է ստորև նշվող ցուցանիշներով՝

ա) մասնակցությունը ֆակուլտետի և մասնաճյուղի ուսանողական հասարակական աշխատանքներին,

բ) զեկուցումներ, ռեֆերատներ, հրատարակված աշխատանքներ (գիտական ամսագրերում և զանգվածային լրատվության միջոցներում),

գ) մասնակցությունը միջբուհական, քաղաքային, հանրապետական և միջազգային մրցույթներին, օլիմպիադաներին, ուսանողական գիտական նստաշրջաններին, ուսանողական շինարարական ջոկատների աշխատանքներին,

դ) ֆակուլտետի կամ մասնաճյուղի ղեկավարության մեկանգամյա կամ բազմակի հանձնարարականների բարեխղճորեն և

Ժամանակին կատարում, որոնք ունեն համապատասխան ձևակերպում:

25. Ուսանողների պատշաճ վարքագիծը դրսևորվում է նրանց կողմից մասնաճյուղի ներքին կարգապահության կանոնների խստիվ պահպանմամբ, և նշված կանոնների խախտման առիթով տնօրենի կամ ֆակուլտետի ղեկանի կողմից տրված նկատողության հրամանները հիմք են հանդիսանում պետական կրթաթոշակ չհատկացնելու համար:

26. ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի առկա ուսուցման համակարգում սովորող 1-ին և 2-րդ խմբի հաշմանդամության կարգ կամ հաշմանդամ երեխայի կարգավիճակ ունեցող ուսանողներին, ինչպես նաև գոհված զինծառայողի երեխա-ուսանողներին հերթական քննությունները և ստուգարքները դրական գնահատականներով հանձնելու դեպքում, վճարվում է կրթաթոշակ՝ անկախ ստացվող նպաստից կամ թոշակից: ԵՊՀ ԻՄ-ում սովորող՝ առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին վճարվում է կրթաթոշակ՝ մասնաճյուղում սահմանված կրթաթոշակի 150 տոկոսի չափով:

27. ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի պետական կրթաթոշակների թվաքանակը և չափը հաստատում է ՀՀ կառավարությունը, յուրաքանչյուր տարի տվյալ տարվա ՀՀ պետական բյուջեով մասնաճյուղին հատկացված միջոցների սահմաններում:

28. ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում պետական կրթաթոշակների հատկացման և հրամանագրման գործընթացը կազմակերպվում է սույն կանոնակարգի 20-րդ կետում նշված մանդատային հանձնաժողովների միջոցով և համապատասխան կարգով: Մրցույթի անցկացումից հետո տվյալ մասնագիտությունում ազատ պետական կրթաթոշակներ առաջանալու դեպքում դրանք կարող են վերաբաշխվել ֆակուլտետի մյուս մասնագիտությունների վրա:

29. Յուրաքանչյուր ուսումնական կիսամյակի ավարտին սույն կանոնակարգի 23-25-րդ կետերում նշված պայմանների պահպանման պարագայում պետական կրթաթոշակի հատկացումը վերահաստատվում է: Թվարկված պայմանները չպահովելու դեպքում ուսանողը գրկվում է պետական կրթաթոշակից:

30. Ազատված պետական կրթաթոշակները մրցութային կարգով հատկացվում են տվյալ մասնագիտության այլ ուսանողներին:

31. Հարգելի պատճառով (ակադեմիական արձակուրդ՝ առողջական վիճակի, զինծառայության մեկնելու կամ ուսանողական փոխանակման ծրագրերով արտասահման ուսումնառության գործուղվելու կապակցությամբ) ուսումնառությունն ընդհատած ուսանողի համար վերականգնվելիս պահպանվում է նախկինում նրա ունեցած պետական կրթաթոշակ ստանալու իրավունքը: Վերջին հանգամանքը պարտադիր կարգով նշվում է ուսումնառության ընդհատումը ձևակերպող հրամանում:

32. ԵՊՀ Իջևանի մասնաճյուղը իրավասու է սեփական և ՀՀ օրենսդրությամբ չարգելված այլ միջոցների հաշվին սահմանելու ներքուհական, այդ թվում՝ անվանական կրթաթոշակներ:

33. ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի անվանական կրթաթոշակ նշանակվում է բակալավրիատի և մագիստրատուրայի՝ առավել աչքի ընկնող, վերջին 4 կիսամյակում անընդմեջ գերազանց առաջադիմություն (մագիստրատուրայի ուսանողների դեպքում հաշվի են առնվում նաև բակալավրիատում ցուցաբերած առաջադիմության արդյունքները) և գիտական, հասարակական ակտիվություն ցուցաբերած ուսանողներին:

34. Անվանական կրթաթոշակի հավակնորդ ուսանողների թեկնածությունները քննարկում են ֆակուլտետների խորհուրդները, որի վերաբերյալ հիմնավորված եզրակացություն են ներկայացնում մասնաճյուղի ուսումնամեթոդական վարչությանը:

Անվանական կրթաթոշակների հավակնորդների ցուցակը ներկայացվում է ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի գիտական խորհրդի հաստատմանը: ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի գիտական խորհուրդը բաց քվեարկությամբ, ձայների պարզ մեծամասնությամբ հաստատում է անվանական կրթաթոշակները, որի հիման վրա մասնաճյուղի տնօրենը տալիս է համապատասխան հրաման: Անվանական կրթաթոշակից զրկելը կատարվում է մասնաճյուղի տնօրենի հրամանով:

35. Անվանական կրթաթոշակների տրամադրումը վերանայվում է յուրաքանչյուր ուսումնական տարվա սկզբում:

Ուսանողը զրկվում է նշանակված անվանական կրթաթոշակից, եթե ուսումնական կիսամյակի ավարտին չի համապատասխանում սույն կանոնակարգի 33-րդ կետով սահմանված չափանիշներին:

ԿԱՐԳ

**ԵՊՀ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ
ԲՈՂՈՔՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ
(հատված)**

Ա) ԲԱՆԱՎՈՐ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԲՈՂՈՔԱՐԿՈՒՄ

1. Բանավոր քննության դեպքում ուսանողը կարող է բողոքել քննության օրը՝ մինչև քննասենյակից դուրս գալը:

2. Ուսանողն իրավունք ունի բողոք ներկայացնելու քննող դասախոսին, իսկ վերջինիս հետ անհամաձայնության դեպքում՝ նույն օրը դիմելու համապատասխան ամբիոնի վարիչին, այնուհետև ֆակուլտետի դեկանին: Համապատասխան ամբիոնի վարիչի կամ դեկանի կողմից կազմվում է հանձնաժողով, և քննարկվում է ուսանողի դիմում-բողոքը:

3. Բողոք-դիմումի քննարկման արդյունքում կարող է որոշում ընդունվել քննության արդյունքի պահպանման կամ բարձրացման մասին:

4. Բողոքի արդյունքում չի կարող որոշում ընդունվել քննության արդյունքի իջեցման մասին:

Բ) ԳՐԱՎՈՐ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԲՈՂՈՔԱՐԿՈՒՄ

1. Գրավոր քննության արդյունքների մասին տեղեկանալուց և աշխատանքներին ծանոթանալուց հետո ուսանողն իրավունք ունի բողոքարկել իր գնահատական արդյունքների հրապարակման օրվա ընթացքում:

2. Ստուգող դասախոսի հետ անհամաձայնության դեպքում կարող է երկօրյա ժամկետում բողոքարկելու նպատակով դիմել դասընթացը սպասարկող ամբիոնի վարիչին, ապա ֆակուլտետի ղեկանին, որոնց կողմից կազմվում է հանձնաժողով, և քննարկվում է ուսանողի դիմում-բողոքը:

3. Արդյունքում գնահատականը կարող է պահպանվել կամ փոխվել:

Գ) ԱՍՓՈՓԻՉ ԱՏԵՍԱՎՈՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ ԲՈՂՈՔԱՐԿՈՒՄ

1. Շրջանավարտը կարող է բողոքարկել ամփոփիչ ատեստավորման կամ ավարտական աշխատանքի գնահատականը ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի կամ առարկայական հանձնաժողովի նախագահին՝ արդյունքների հրապարակելուց հետո՝ 1 ժամվա ընթացքում:

2. Գրավոր բողոքը ներկայացվում է հանձնաժողովի նախագահին, որի քննարկումը կազմակերպվում է նույն օրը:

3. Գրավոր բողոքի քննարկմանը մասնակցում են մասնաճյուղի վարչական անձնակազմի, տվյալ հանձնաժողովի ան-

դամ չհանդիսացող աշխատակիցը և մասնաճյուղի ուսանողական խորհրդի ներկայացուցիչը, որոնց թեկնածությունները նախապես հաստատվում են տնօրենի կողմից:

4. Շրջանավարտի ներկայությամբ լսվում է պատասխանի ձայնագրությունը: Բողոքարկման արդյունքում բաց քվեարկությամբ, հանձնաժողովի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ, կայացվում է որոշում՝

ա) գնահատականը թողնել անփոփոխ,

բ) գնահատականը բարձրացնել:

5. Ընդունած որոշման վերաբերյալ կազմվում է արձանագրություն, որը ստորագրվում է հանձնաժողովի նախագահի, մասնաճյուղի վարչական անձնակազմի, ուսանողական խորհրդի ներկայացուցիչների և շրջանավարտի կողմից:

6. Կայացված որոշմանը անհամաձայնություն հայտնելու դեպքում գրավոր ներկայացվում է հատուկ կարծիք, որը կցվում է արձանագրությանը:

7. Գնահատականի փոփոխման դեպքում արձանագրությունների հատուկ մատյանում կատարվում է համապատասխան գրառում:

Գ) ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ, ՊԵՏԱԿԱՆ ԵՎ ՆԵՐՔՈՒՀԱԿԱՆ ԿՐԹԱԹՈՇԱԿՆԵՐԻ ՀԱՏԿԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԲՈՂՈՔԱՐԿՈՒՄ

1. Մասնաճյուղի մանդատային հանձնաժողովի կողմից ուսանողական նպաստի ձևով ուսման վարձավճարի լրիվ փոխհատուցման իրավունք ունեցող ուսանողների, պետական և ներքուհական կրթաթոշակների հաստատված ցուցակները մեկօրյա ժամկետում հրապարակվում են ֆակուլտետներում (փակցվում են յուրաքանչյուր ֆակուլտետի հրամանների և հայտարարությունների ցուցատախտակին):

2. Ցուցակների վերաբերյալ դիմում-բողոքները երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացվում են մասնաճյուղի մանդատային հանձնաժողովին: Նշված ժամկետի ավարտից հետո մասնաճյուղի մանդատային հանձնաժողովը քննարկում է ներկայացված դիմում-բողոքները (եթե այդպիսիք կան), հաստատում է ուսանողների վերջնական ցուցակները:

3. Ուսանողների վերջնական ցուցակները հրամանագրման նպատակով ներկայացվում են մասնաճյուղի տնօրենին:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի տնօրենի ողջույնի խոսք	3 -
ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի առաքելությունը	5 -
Պատմական համառոտ ակնարկ	5 -
Մաս I	9 -
ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի կառուցվածքը.....	9 -
ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի.....	9 -
Ֆակուլտետներն ու մասնագիտությունները.....	9 -
ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի գրադարան	16 -
Շրջանավարտների եվ կարիերայի կենտրոն	19 -
Ուսանողական կառույցներ.....	20 -
Կուրսի ավագի պարտականությունները	22 -
Ստուգման գրքույկ.....	23 -
Մաս II	24 -
Ուսումնական գործընթացի կազմակերպում.....	24 -
Բուհ-ում սովորելու առանձնահատկությունները	24 -
Լսարանային պարապմունքների կազմակերպում.....	25 -
Կուրսային եվ ավարտական աշխատանք	30 -
Պրակտիկա.....	31 -
Քննաշրջանի նախապատրաստական աշխատանք.....	32 -
Գործնական գրություններ.....	33 -
Մաս III	42 -
Կրեդիտային համակարգի ընդհանուր նկարագիրը	42 -
Ծանոթություն բոլոնիայի գործընթացին	42 -
Կրեդիտային համակարգի նկարագրությունը եվ հիմնական գաղափարները	43 -
Գիտելիքների ստուգման եվ գնահատման համակարգը	44 -
Գնահատման մեթոդաբանությունը.....	46 -

Քննությունների վերահանձնումը եվ դասընթացի կրկնումը.....	- 57 -
Ուսումնական խորհրդատու.....	- 59 -
Մաս IV.....	- 61 -
ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի կանոնակարգեր.....	- 61 -
ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի կանոնադրություն (հատված).....	- 61 -
ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի ներքին կարգապահական կանոնները (հատված).....	- 66 -
Կարգ.....	- 70 -
Ուսանողների կողմից դասընթացների ընտրության եվ դրանցում ընդգրկվելու համար գրանցման (հատված).....	- 70 -
Կանոնակարգ.....	- 72 -
ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի ուսանողական նպաստների, պետական եվ ներբուհական կրթաթոշակների հատկացման (հատված).....	- 72 -
Կարգ.....	- 86 -
ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի ուսանողների բողոքների քննարկման (հատված).....	- 86 -

**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ԻԶԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ**

**ԱՌԱՋԻՆ ԿՈՒՐՍԻ
ՈՒՍԱՆՈՂԻ ՈՒՂԵՑՈՒՅՑ**

ԿԱԶՄԵՑ՝ ՎԱՀԱՆ ԱՂԱԲԱԲՅԱՆԸ

**Հասցե՝ 4001, ՀՀ Տավուշի մարզ, ք. Իջևան, Ուսանողական 3
Կայքէջ՝ www.ijevan.ysu.am**